



	էջ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ, Պապի՝ «Sempiternus Rex»-ի ընդհանրական նոր բուրբր ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ օրհներոյան կոնդակը ճեղկահայ եվրոպա- տունեղին	3 7
ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ	10
ՎԱՀԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ, Հարոյան պատգամը	16
ԴԵՐԵՆԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ, Գարձյալ միևնույն հանկերգը	21
Յ. ԲՈՌՉԱՆՅԱՆ, Երկու խոսք կարդիւնալ Աղաչանյանի ազգագրակ գործունեոյան մասին	24
Գ. ՍԱՐԳՍՅԱՆ, Բզեռն նորավանք	28
ՊՐՈՑ. ԳՈԿՏ. Ա. ԱՐՐԱՀԱՄՅԱՆ, Ուղիների դիմումը Պետրոս I-ին	39
ՀԵՆՐԻԿ ՍԱՐԿԱՎԱԿ, Զատկական տոները Մայր Աթոռում	41
Մ. ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ, Երևանի կենտրոնական ծածկած շուկայի բացումը ՀԱՄԱՌՈՑ ԼՈՒՐԵՐ	46 50
ԹՂԹԱԿԻՅ, «Մեր օրերի իրական վասակը»	53
Յուցակ Մայր Աթոռ Ս. էջմիածնի նոր ստացված ձեռագրերի	57
Խ., Ն ա զ ա շ Հ ո վ ն ա բ ա ն, «Բանաստեղծոյություններ»	62
Գիտական և զեղարվեստական նոր հրատարակոյություններ	68

Խ Մ Բ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Հ Ա Ս Յ Ե Ն

Հ.Յ.ՍԿԵԿԵՆ ՍՍՁ, ԷՋՄԻԱՇՆԻՆ

«ԷՅՄԻԱՇՆԻ» ՍՍՁԳՐԻ ԽՄՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР. Эчмиадзин, Редакция журнала „Эчмиадзин“
Redaction of the magazine „Etchmiedzin“. Etchmiedzin, Armenia, USSR

Հ Ր Ա Մ Ա Ն Ա Ի
Տ. Տ. ԳԷՈՐԳՍԵ Ջ.

ՎԵՀԱՓԱՌԻ ԵՎ ՍՐՐԱՋՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՊԱՊԻՆ՝ „SEMPITERNUS REX“-Ի ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՆՈՐ ԹՈՒՂԹԸ

Մատիկանի Պիոս 12-րդ պապը, 1951 թվականի սեպտեմբերի 8-ին իր «Մանանայապետություն» 15-րդ տարում, հրատարակել է մի «Ընդհանրական բուլղո»՝ Քաղկեդոնի տարածույակ ժողովի 1500-ամյակի առթիվ: Ընդհանրական իր այդ բղթում պապը նախորդների սովորական ոճով առաջ է փառում «Հոռմի ֆանանայապետության» գերագան առաջնության հարցը ֆրիստոնեական մյուս եկեղեցիների վրա, շեշտում է Քաղկեդոնի ժողովի «գիստ մեծ նշանակությունը» դոգմատիկ հարցերը վճռելու գործում և կոչ է անում բոլոր այն եկեղեցիներին՝ այդ բվում նաև Հայ եկեղեցուն և հայ ժողովրդին՝ որոնք իբր թե «ժամանակի խոսվության պատճառով» հատկապես Արևելյան երկրներում, յաժանվեցին եկեղեցու՝ գրկից և միությունից, որպեսզի ճեռեն իրենց նախաճայրերի ուսմունքին և օրինակին և շվարտեն պատշաճ մեծարանք ընծայել, Հոռմի ֆանանայապետի գերագան առաջնության... հրատարվեն իրենց մարտություններից և ընդունեն ամբողջությամբ Քաղկեդոնի վարդապետությունը:

Գուցե այսօր, ավելի քան այլ ժամանակ, Քրիստոնեական Ընդհանրական եկեղեցին կարիք ունի խաղաղության, համահարաշխություն, միասնության: Այսօր, ավելի քան մի

այլ ժամանակ, ՀՍՍՀ եվ ՎՃՌԱԿԱՆ ՊԻՏԻ ՀՆՁԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՋԱՅՆԸ, Ի ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ, ԸՆԴԴԻՆՄ ՊԱՏԵՐԱՋՄԻ: Սակայն գործնականում ի՞նչ է անում Կաթոլիկ եկեղեցին պատերազմի շղագարություն վարակված իր մթնոլորտում, կա՞ արդյոք նրա մոտ ֆրիստոնեական սիրո և եղբայրության անկեղծ ձգտում:

ԿԱԹՈՒԼԻԿ ԵԿԵՂԵՑԻՆ ՎՍՏԻՎՈՒՆԻ ԳԼԽԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ ԱՅՍՈՐ ՍՏՐԿԱԿԱՆ ՄԱՌԱՑՈՒԹՅԱՆ ՄԵՋ է ԳՏՆՎՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԻՆԱԿՑԻԱՑԻ ՄՈՏ: Կաթոլիկ եկեղեցին վաղուց նույնացել է աշխարհիկ պետության հետ՝ կորցնելով իր ֆրիստոնեական հոգևոր նկարագիրը: Վատիկանը մի՞շտ էլ կրել է իր մեջ կայսերական Հոռմի նվաճողական ոգին և աշխարհակալական հավակնությունները: Նրա ուղադրության կենտրոնում եղել են ո՛չ թե կրոնական-եկեղեցական հարցեր, որի համար նա կյանքի է կաշված, այլ տնտեսական-ֆալաֆական գործեր: Այսօր Ամերիկայում Կաթոլիկ եկեղեցին իրենից ներկայացնում է տուտրական մի հսկա կազմակերպություն: Նա իր զբամազությունները ներդրել է պետական ուղղական արդյունաբերության մեջ, հատկապես այն ձեռնարկություններում, որոնք տեղադրված ձևով այժմ աշխատում են պատերազմի համար: Պիոս 12-րդը սերտ կապերի մեջ է Մոսկուի քանկային տան

հետ, որը Ամերիկայում Պիոս պապի ֆինանսական սպեկուլացիան է գլխավորում: Վատիկանի և աշխարհիկ պետությունների փոխհարաբերությունները միշտ էլ արտահայտվել են միջազգային բազմաթիվ պայմանագրերում: Պիոս 12-րդը 28 համաձայնություններ է կնքել, այդ թվում՝ ֆաշիստական Իտալիայի, հիտլերյան Գերմանիայի, կայսերական Յապոնիայի, ֆաշիստական Ֆրանկոյի, դավանան Չան Կայ-շիի հետ և այլն: Պարզ է, որ այդ աշխարհիկ-ֆալաֆական բնույթի համաձայնագրերը ո՛չ միայն ընդհանուր ոչինչ չունեն Քրիստոնեական եկեղեցու ընդհանուր շահերի հետ, այլև մեծապես վարկաբեկում են նրան:

Վատիկանը իր աշխարհիկ տերերի քելադությունը այժմ ուզում է ստեղծել ընդհանուր կրոնական եզակատ Արևելքում ընդդեմ խաղաղության, ժողովուրդների ազատության և Ուղղափառ եկեղեցիների միասնության:

Քաղկեդոնը վաղուց անցել է պատմության գիրկը: Արևելյան Ուղղափառ եկեղեցին, այդ թվում նաև Հայոց եկեղեցին, սովել է իր արդար և անզուսնակի դատավիճար Քաղկեդոնի պառակտելի ժողովի մասին, որը 451 թվից ի վեր բաժան-բաժան արեց եկեղեցին՝ խախտելով նրա միասնությունը: Պապը անցյալի հուշերը արժանեցնելով, այսօր էլ ձգտում է, ինչպես 5-րդ դարում, խանգարել Արևելյան Ուղղափառ եկեղեցիների կառ համագործակցությունը և համախմբվածությունը: Բայց, օգոստոս է ընդդիմ խրախի առաջել...:

Արևելյան Ուղղափառ եկեղեցիները՝ երեք տիեզերական ժողովներում և հետագայում, հաստատական դրսևորել են իրենց համերաշխությունն ու միասնությունը ո՛չ միայն զոգմատիկ հարցերում՝ ընդդեմ ամեն տեսակի կրոնական մոլորությունների, այլ նաև վարչական-կազմակերպչական հարցերում:

Լևոն պապը, 451 թվին, Քաղկեդոնի ժողովի միջոցով, իր տիրաճոշակ շտամարտով, աշխատեց փանդել եկեղեցիների միասնությունը՝ որով ցանկանալ Տիրոջ եկեղեցու մեջ: Քաղկեդոնի ժողովը, կեղծ դավանաբանական դիմակի տակ, պատրիարխական արձանների պայթար էր՝ Հռոմի գլխավորությամբ, ընդդեմ Աղեֆաանդոթիայի Ուղղափառ մեծ Աթոռի:

Արևելյան Ուղղափառ եկեղեցին՝ հենվելով ավետարանական բնագրերի վրա, առաքելական թղթերի ղեկավարության վրա, առաքելական հարցերի ուղղափառ դավանության վրա, նզովել է և՛ Քաղկեդոնը, և՛ Լևոն պապը, և՛ նրա տոմարը: Նրե Վատիկանը ծանոթ չէ այդ բոլորի հետ, ավելի վառ նրա համար: Քաղկեդոնից է սկիզբ առնում Վատիկանի

խաչակրաց արշավանքը Հայոց եկեղեցու հայ ժողովրդի և նրա ֆալաֆական անկախության դեմ: Այդ պայտարը շարունակվում է մինչև այսօր նո՛յն առեւտրյամբ, նո՛յն կրոնաւորյամբ և անհանդուրժողությամբ: Հայ հավատացյալ ժողովուրդը 5-րդ դարից մինչև այսօր ծառայել է Վատիկանի դեմ իր հոգու ամբողջ վնասակնությունը, խորը սկզբունքայնությամբ և համոզումով՝ պաշտպանելով իր կրոնական ուղղափառությունը և ինքնանկախությունը:

Կաթոլիկ եկեղեցու նվաճողության դեմ մղած իր հետեւողական դարավոր պայտարում մեր ժողովուրդը համոզված է եղել, որ Հայոց եկեղեցու տևականությունը կայանում է նրա ազգային անկախության և եւրփին ինքնուրույնության մեջ: Քաղկեդոնի ժողովը ուղղված է եղել Արևելյան Ուղղափառ եկեղեցիների եւրփին սուվերենության դեմ, միասնության դեմ, այն ամենի դեմ, ինչ ուներ Առաքելական Ընդհանուր եկեղեցին մինչև Քաղկեդոն: Այս է պատմական իրողությունը:

Հայոց եկեղեցին, իր պատմության ողջ ընթացքում, ղեկավարվել է մյուս փուլը Ուղղափառ եկեղեցիների նկատմամբ քրիստոնեական եղբայրության և սիրո սկզբունքով՝ «Միսրիսի և կարևորս, ազատութիւն՝ յերկրայս, սէր՝ յամենայնիս»: Հայոց եկեղեցին երբե՛ք չի փորձել Կաթոլիկ եկեղեցու նման «Արտաֆոյ Հռովմեական եկեղեցույ չիք փորկութիւնս այլամերժ ուսմունքը, երբե՛ք իր անդրանկությունը չի վաճառել Հռոմից յստացված ոսպնաքանի համար, և ամեն անգամ, երբ Վատիկանը ձեռք է բարձրացրել մեր հավատի սրբությունների, ուղղափառության վրա, մեր ժողովուրդը կտրել է այդ խառնակի ձեռքը: Իրա համար էլ, իր անցյալի կենսափորձով, ԱՅՍՈՐ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ՄԵՐՉՈՒՄԻՆ Է ՊԻՈՍ 12-ՐԴԻ ՆՈՒՆԻՔԱՆ ՏԵՐԱՀԱՆԳԱԿ ԸՆԴՀԱՆՐԱՍԱՆ ԹՈՒՂԹԸ, ավելի քան վնասկան իր պայտարը շարունակելու համար Վատիկանի դեմ, ավելի քան երբե՛ք հաստատ իր պապերի դարավոր հավատին վրա. Եւ յառաճեալ յամենայն հոգմոց վարդապետութեան՝ խաբէութեամբ մառդկան, խորամանկութեամբ ի խաբէութիւն մոլորութեան» (Նիքիս. Գ 14): Հայ հավատացյալ ժողովուրդը ամուր է կանգնած իր պապերի առաքելական հավատի վրա, իր պապերի, արձնէ երբեք ֆաղկեդոնական չեն եղել՝ հակառակ բոլոր Պիոսների դիտումնավոր կեղծիքներին: Հայոց եկեղեցին անսասան է իր հավատի ուղղափառության վրա, ժերէկ և այսօր, նոյն և յալիտեանս: Նա երբե՛ք չի նեւաղել ուղղափառությունից. Եւ ճորոգ եմօտ ի մեզ ուղղափառութիւն, այլ ի հարցն

առաջնոց իշանէ, որով ոչ էրեւալ ուշ թշնամին, գրպարեան գմեզ անպատկառ բարբառո՛ք (ներես Շեռեալի) :

Հայոց նկեղեցին մի՛շտ ձգտել է տեսնելու, Բրտառնեական նկեղեցիների բազմալի միասնությունը՝ լմի հետ և մի հովիւ սկզբբունեով : Ամեն օր նա աղոթում է Վասն միայն Սուրբ, Կարողիկէ և Առաքելական Սկեղեցւոյ, որի ընդհանրությունից բաժանված է Կարօլիկ նկեղեցին՝ իր հերձվածող :

Պայի հանգնությունը Սուրբ Հոգու դեմ հայնություն է հասնում, երբ նա իրեն պարտագրում է իրև շաջ հովիւ Քրիստոնեական ընդհանուր նկեղեցու վրա, և պահանջում է աստվածային հարգանք իրև շաջունընենաւոր արեալ : Նվ դա պարզ է ու հասկանալի : Վատիկանը պետություն է պետության մեջ, և ո՛չ երբեք նկեղեցի :

Վատիկանի միջոցով Ամերիկայի ղեկավարները իշխում են Կարօլիկ հավատացյալների վրա : Վատիկանը իր շոջափուկների միջոցով հսկայական դավադրական գործունություն է ծավալում կայսրալ և գաղութային երկրներում՝ իր աշխարհիկ տերերի հաշվին :

Վատիկանը մի՛շտ էլ թշնամի է եղել ճշըրված ժողովուրդների ազատագրական շարժումներին : Աշխարհում բոլոր ազնիվ մարդիկ վճարաբար դատապարտում են Կորեայում ամերիկյան ագրեսիան և պահանջում են դադարեցնել այն, իսկ շաջառնայա Վատիկանը ո՛չ միայն դեմ է դուրս գալիս ժողովուրդների պատերազմը դադարեցնելու պահանջներին, այլ այդ ագրեսիային կրճատակ պատերազմի գոյն է տվել : Բայց իր հայրենիի համար հերոսաբար պայքարող կորեացիներ այդպէս չի մտածում «կարօլիկ ամերիկացու» մասին : «Ամերիկացիները Բրտառնայաներ են, — գրում է Կարօլիկ մի կորեուհի, — բայց ինչպէս է որ երանք սպանում են մարդկանց. ես էլ Բրտառնայ եմ, բայց երբ ամերիկացիները մտան Կորեա, ես այլևս չեմ կարող ոչեչի հավատալ...» :

1949 թվի փետրվարին, Հունգարիայում Միևտեսետ կարգիւնայի դեմ բացված դատը շույց տվեց ամբողջ աշխարհի ժողովուրդներին, որ Կարօլիկ նկեղեցին նոր դեմոկրատիայի երկրներում հանդիսանում է ազգային զավաճանության, խռովության կենտրոն : Կարօլիկ նկեղեցին իր հոգևոր իշխանությունը, շաջ ետ Տէր ոչ ի հակել, այլ ի շիւնէր, սպասարկում է խաղաղության թշնամիներին : Անա ո՛ր է հասել մի Բրտառնայ նկեղեցի իր ողջ նվիրապետությամբ որի դեկավար Պիոս 12-րդը հայտնում է այն կարօլիկ հավատացյալներին և Բանաններին,

որոնք մասնակցում են աշխարհում ժողովուրդների հանուն խաղաղության մղած պայքարին և ստորագրում են Ստոկհոլմի կոչի տակ : Կարօլիկ հավատացյալների գերակշռող մասան հավատարիմ է դեմոկրատիայի և խաղաղության գործին, և զատապարտում է Կարօլիկ նկեղեցու վերնախալի նվաճողական հակաԲրտառնեական ընթացքը :

Կարօլիկ նկեղեցին այսօր իրենից չի ներկայացնում միատարր մի ամբողջություն. ընդհանուր հավատացյալ մասան՝ աշխատավորներ են, բանվորները, գյուղացիությունը, մանր առևտրականները : Կարօլիկ վերնախալը միաձուլվել է պատերազմի հրձիգների հետ և ապրում է նրա մարդասպան գաղափարներով : Շարժալի կարօլիկ աշխատավորությունը խաղաղություն է ուզում մյուս ժողովուրդների պէս, իսկ վերնախալը կառչել է պատերազմի հրձիգների արկածայինըրական Բաղափակնությունը : Շարժալի կարօլիկ հավատացյալներ՝ աշխատավոր մասաների հետ պայքարում են ամբողջ աշխարհում հացի, ազատության, խաղաղության համար : Վերնախալը՝ որը ծառայում է Տրումբեյի՝ օրնում է նրանց աշխատանքը ընդդէմ աշխատավորության ապրելու իրավունքի :

1949 թվից հետո Պիոս 12-րդի նշանակած 32 կարգիւնայներից մեծ մասը ամերիկացիներ են : Ամերիկայում արդեն խոսում են բացահայտ կերպով այն մասին, որ հաջորդ պայքը ամերիկացի պետ է լինի : Դրա հետ մեկտեղ, աճում է կարօլիկ շարժալի հավատացյալների համըրաշխությունը՝ խաղաղության և դեմոկրատիայի հակառի հետ, աճում է նրանց դժգոհությունը Վատիկանի հակաԲրտառնեական, հակաժողովրդական Բաղափակնության դեմ, ամերիկյան պատերազմի հրձիգներին ծառայելու գործողություններին :

Կարօլիկ նկեղեցին, Վատիկանի գլխավորության այսօր արտասանական երկրներում գլխավորում է Հայոց Առաքելական Սուրբ նկեղեցու անջատման գաղափարը՝ Հայոց նկեղեցու դարավոր ու պատմական կենտրոն, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից : Հայ հավատացյալ ժողովուրդը վճռականապէս դեմ է եղել Մայր Աթոռի նկատմամբ Վատիկանի վերած այդ Բաղափակնությանը : Արտասանմանում մեր հայրենասէր և բարեպաշտ ժողովուրդը, առաջադեմ մտավորականությունը, մամուլը, կոչ են աճում ուժեղացնել պայքար Վատիկանի նվաճողական Բաղափակնության դեմ՝ առաջնորդ ունենալով այն գաղափարը թէ՛ «հաւան եմք ընդ հարս մեր ի դժոխս իջանել և ոչ ընդ հո-

ոսուց յերկինս ելաներ (Գրիգոր Տուսեորդի): Ավելորդ է սեկնությունը, որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէս:

Հայոց եկեղեցին այսօր, իր հարազատ Պետության հովանու տակ, խաղաղության մեջ տնուս ու զարգանում է՝ իր ժողովրդի հոգևոր սպասին նվիրելով իր բովանդակ ուժն ու հոգաձությունը: Հայոց եկեղեցին այսօր, արտասանմանում՝ Անթրիսասում, Երուսաղեմում, Կոստանդնուպոլսում, Ամերիկայում և այլուր հոգևոր զարթոնք է ապրում: Հայ հավատացյալ ժողովուրդը միշտ էլ խանդավառված է եղել իր Ազգային եկեղեցիով, երա պատմությամբ, երա հետևողական խաղաղասիրական հաղափականությամբ:

Մայր Հայրենիքում և Ափյառում՝ հայ ժողովուրդը ավելի ու ավելի է համախմբվում իր սիրելի և պաշտելի Հայոց Առաքելական Սուրբ եկեղեցու, և իր հերոսական, ցանկալի ու նվիրական Սովետական Հայրենիքի ջուրջ: Միշտ էլ լծալն բարբառոյ յանապատիս են մնացել Ղոմսի պագերի բոլոր կոչերը՝ Սուրբ էջմիածնից բաժանվելու ուղղությամբ:

Վառիկանը այսօր ո՛չ միայն Հայոց Առաքելական Սուրբ եկեղեցու երդվյալ թշնամին է, այլ նաև մեր հզոր Սովետական Հայրենիքի: Սովետական Հայաստանի ձեռք բերած նվաճումները՝ զբաղեցնողական, արվեստի, արդյունաբերության, գյուղատնտեսության և այլ բնագավառներում, մինչ օրինական հպարտություն են առաջացնում բովանդակ հայության սրտերում՝ առանց դավանական խտրության և ուժեղացնում են հայրենասիրական զգացմունքը զեպի Սովետական Հայաստան, Վատիկանն ու երա հայ ծիրանավոր և ոչ ծիրանավոր զվարճական հովիվները ձգտում են նսնմացնել մեր Հայրենիքի այդ նվաճումները: Մեր երկրի և մեր ժողովրդի

90 տարում ձեռք բերած հաղթանակները մանվան դատավճիռ են կարգում Վատիկանի հայանալած հաղափականությամբ:

Ամեն հայրենասեր հայ հպարտ է և՛ իր Մայրենի եկեղեցի՝ Սուրբ էջմիածնով և՛ իր Սովետական պանծալի Հայրենիքով: Սիշտ էլ խայտառակաբար տապալված են եղել Վատիկանի գլխավորած արշավները հայ ժողովրդի և Հայոց Առաքելական եկեղեցու դեմ:

Հայ հավատացյալ և հայրենասեր ժողովուրդը, ի պատասխան Պիոս 12-րդի պառակտողական կոչերին, ուժեղացնում է իր սերն ու նվիրվածությունը դեպի Սովետական Հայաստանն ու Հայոց եկեղեցու կենտրոն և զուլիս Սուրբ էջմիածինը: Ամենայն Հայոց Հայրապետությունն այժմ արժանավորապես գլխավորում է մեծ հայրենասեր Գեորգ Զ. Մերգզեագույն Կաթողիկոսը, որի ղեկավարության տակ Հայոց Առաքելական Սուրբ եկեղեցու համար սկսվել է իսկապես հոգևոր և կուլտուրական զարթոնքի մի շրջադարձալին, պատմական ժամանակաշրջան:

Քո՛ղ Երկնավոր Տերը երկարացնի Ազգիս Վեհափառ Հայրապետի կյանքի թանկագին տարիները ի պայծառություն Հայոց Առաքելական Սուրբ եկեղեցու և ի մխիթարություն հավատացյալ հայ ժողովրդի:

Քո՛ղ հավետ կանգուն ու պայծառ մնա Ամենայն Հայոց Հայրապետությունը՝ Մայր Աթոռ Սուրբ էջմիածնով:

Քո՛ղ կանգուն ու պայծառ մնան Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունը՝ Անթրիսասում, Սուրբ Երուսաղեմի և Կոստանդնուպոլսի պատրիարքությունները, հայոց եկեղեցական բոլոր բնմերն խրենց ժողովուրդներով, հոգևոր դասով, մեծով ու փոքրով:

ՔՔԱԳԱՒՈՐ ԵՐԿՆԱՒՈՐ, ԶԵԿԵՂԵՑՒ ՔՈ ԱՆՇԱՐԺ ՊԱՆԿԱ՛: ԱՄԵՆ:





**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԿՈՆԴԱԿՏ
ՀՆԴԿԱՀԱՅ ՆՎԻՐԱՏՈՒՆԵՐԻՆ**

**ԳԻՈՐԳ ԵԱՌԱՑ ՅԻՍՈՒՍԻ ԳՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹԻԱՄԲ
ՏԵԱՌՆ ԵՒ ԿԱՄՐՔՆ ԱԶԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊՈՍ
ԵՒ ԿԱՐՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԵԱՅՐԱԳՈՑՆ
ՊԱՏՐԻԱՐԻ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՐԵՍՈՐ ԱՐԻՈՒՈՑ
ԱՌԱՔԵՂԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՏԻՈՑ ՍՐՔՈՑ
ԿԱՐՈՒՂԻԿԵ ԷԶՄԻԱՆԵՒ**

ՀՆԿԱՀԱՅ ՍԻՐԻՒԻ ԺՈՂՈՎՐԻՅԱՆ ՄԵՐՈՒՄ, ՀԱՐԱԶԱՏԻ ՄԱՅՐ ԱԹՈՒՈՑ
ՍՐՔՈՑ ԷԶՄԻԱՆԵՒ ԵՒ ՔԱՐԵՊԱՇՏ ՆՈՒՐԱՏՈՒ ԶԱՐԱԿԱՅ ՄԵՐՈՑ, Ի ԳԱՀԵՆ
ԱՌԱՔԵՂԱՇԱՒՈՂ ՍՐՔՈՑ ՀՕՐՆ ՄԵՐՈՑ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐԳԻ ԵՒ Ի ԳԱՀԱԿԱԿ
ՆՈՐԻՆ ՈՂՋՈՑՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ:

Երկու տարի առաջ, ճնադարյան Հայ Եկեղեցու ավանդույթյան ճեղքելով,
ձեզ այցելութան ուղարկեցինք, որպես հայրապետական պատվիրակ, Սուրբ
Էջմիածնի լավագույն միաբաններից մեկին՝ Գերագույն Հոգևոր Խորհրդի հա-
խազանող անդամ՝ գերաշնորհ տեր Վահան արքեպիսկոպոս Կոստանյանին,
որ ուսումնասիրե ձեր հոգևոր-կրթական կյանքը, հասկանա ձեր կարիքներն
ու վշաբեր և մխրթարե ու մխրթարվի ձեզնով և Մեզ գեկուցանե ի տնօրինու-
թյուն:

Հանությամբ լսեցինք ձեր եկեղեցական-կրոնական կյանքի և պահանջ-
ների, ձեր ազգային-կրոնական կրթության ու դաստիարակության, ինչպես
նաև ձեր բնառեկան և տնտեսական վիճակի մասին:

Մեր պատվիրակը գեկուցեց նաև, որ դուք տեղում իր կատարած բոլոր
ձեռնարկներին աջակից ու գործակից եք եղել և նպաստել եղաց կենսագործ-
ման, օրհնում եք ձեզ և հորդորում այդպես լինել նաև ապագայում:

Մեր պատվիրակի գեկուցումներն ու ձեր ճեղք գործերը առիթ են դն-
ծալում Մեզ վերհիշելու ճեղքանայերի՝ ձեր նախնայաց մեծագործութանց ու
փառավոր անցյալի մասին:

Հնդկահայությունը՝ 17-րդ դարու վերջին քառորդից մինչև 19-րդ դարու
առաջին քառորդը, վանառակաճական ասպարեզում մեծ հաջողություն ունե-
ցավ և հարստացավ ու՝ թե՛ երկրում և թե՛ երկրից դուրս՝ հայ ժողովրդի
կյանքում մեծ դեր կատարեց և իր համար հայ պատմության մեջ որոշ դիրք
ստեղծեց:

Հնդկաստանում հայության մեջ սկիզբ առավ կուլտուրական-կրթական
շարժում՝ զգալիորեն անցն հայ դպրոցների թիվը, բացվեց հայ հեմարան,

գարգացավ մամուլը, գորացավ գրական գործունեությունը և այսպես սկիզբ առավ հեղինակայության մեջ կուլտուրական-կրթական շարժում և գարգացավ: Հեղինակայությունը արտաքին հայության նկատմամբ երկու ուղղությամբ աշխատանք տարավ. մեկ՝ ֆրիստենեական կրոնի բարոյական վեճմ գաղափարները հայ կյանքում կենսագործելու ուղղությամբ, որի ապացույց կարող են հանդիսանալ իրեն նմա՛յ՝ Արիսի ֆաղափներում և Նոր-Նախիջևանում հիշյալ նպատակներով համայնքների անվամբ թողած խոշոր կտակները՝ ձերանոցներ, հիվանդանոցներ, անկեղանոցներ, որքանոցներ և նման աստվածահանո հաստատություններ հիմնելու նպատակով՝ արմատացնելու համար ֆրիստենեական կրոնի և սիրո ու եղբայրության գաղափարները հայ ժողովրդի կյանքում: Այսպիսի կտակներից է Մասեն Բարաջանի կտակը Նոր-Նախիջևանի համայնքին թողած:

Երկրորդ ուղին ֆաղափական բնույթ ունի. հեղինակայ ժողովուրդը ցանկացել է արտաքին հայության, հատկապես կովկասահայության ֆաղափացիական կյանքը ապանովել և հեազնետե ֆաղափական ինֆեուուույն կյանք ստեղծել ոուսաց պետության աջակցությամբ և նորա հովանավորությամբ: Սորա ապացույց են գույություն ունեցող գրավոր փաստաթղթերը և՛ ոուսաց կայսրների սիրաջանելու նպատակով՝ եոցա նվիրաբերած քանկարծեֆ նվերները:

Տասնիններորդ դարից սկսած փոխվեցան Հեղիաստանում կյանքի պայմանները և հեղիանայությունը վաճառականական մրցման մեջ տեղի ուվավ եվրոպացի վաճառականներին, սակայն քարեթախտարար, պանպանեց և ցալսուր պահպանել է իր էկեղեցասիրությունը և ազգային-կրոնական ոգին, որ այնքան կարևոր է բարձր կուլտուրա ունեցող ժողովուրդների մեջ ապրողին՝ նույնպես վտանգից գերծ մեալու համար: Հեղիանայությունն այսուր էլ գաղափարով և գործով նույն էկեղեցասերն է և նույն ազգասերն ու հայրենասերը, ինչպես և առաջ: Մտեֆ Սուրբ էլմիածեֆ էկեղեցական քանկարանը և դուֆ կտեսեեֆ այնտեղ քանկարծեֆ ջուրջաոներ, քազեր, քանկարծեֆ վաճառուրներ, դպիրների և երզնական խմբերի համար մետախես ժամադապիկներ, արծեֆավոր արծաթ-սուկեզոծ էպիսկոպոսական գավազաններ, արծաթյա մեծ և փոքր աշտանակներ և սկիհներ, բուրոն էլ հեղիանայության նվերներ, որոնք արծեֆավոր են ինչպես իրենց ռաակով, նույնպես նաև հնույթյամբ:

Հեղիանայությունն այսուր էլ արտաճալում է նույն էկեղեցասիրությունը. նա ուղարկել է Սուրբ էլմիածին բազմաթիվ և բազմառեսակ նվերներ՝ Սուրբ Պատարագի հայրապետական յիակաուար զգեստ, Սուրբ Պատարագի մի ֆանի ձեոֆ էպիսկոպոսական յիակաուար զգեստներ, հայրապետական և էպիսկոպոսական արծաթ-սուկեզոծ գավազաններ և այլն, որպեսզի հայության կենտրոնական մեծագույն սրբավայրը պահպանել իրեն հատուկ վայելույ տեսքը, հմայլն ու խորհրդավորությունը:

Հեղիանայությունը աշխարհի այս չափազանց յարված վիճակի մեջ անգամ չի սուուացել Հայոց Հայրապետի և՛ նորա 80-ամյա հաբեյտական հանդեսի տոնակատարության տոթիվ՝ նվիրաբերել է սուկե քանկարծեֆ ժամացույց մականությամբ, որ անշուշտ կլինի մեայուն հիջատակ գալիֆ սերունդների համա՝ և հուշարար՝ հեղիանայ ժողովրդի ազգային-կրոնական ջերմ զգացմունքների և ապրումների:

Նվիրատուներն են՝ 1. Հայրապետական սուկե ժամացույցը, հայրապետական և էպիսկոպոսական արծաթ-սուկեզոծ գավազաններն ու մեացյուլ զգեստները նվիրել է Կալկաթայի բարեպաշտ և հայրենասեր հայությունը: 2. Սուրբ

Պատարագի հայրապետական լիակատար զգեստը ընծայարեթի են պ. Հակոբջան և Կ. Ֆրիտա հաշտարյան բարեպաշտ ամուսինները: 3. Սուրբ Պատարագի եպիսկոպոսական լիակատար զգեստ՝ գերաշնորհ տեր Վահան աբեղապիսկոպոսի անունով նվիրաբերել է պ. Պետրոս Ալեխյանը: 4. Սուրբ Պատարագի եպիսկոպոսական մի ձեռք զգեստ նվիրաբերել է պ. Պատար Արարիկյանը: 5. Սուրբ Պատարագի եպիսկոպոսական մի ձեռք լիակատար զգեստ նվիրաբերել է շնորհաշում տիկին Մարիամ Բաղդասարյանը: 6. Սուրբ Պատարագի եպիսկոպոսական լիակատար մի ձեռք զգեստ նվիրաբերել է շնորհաշում տիկին Արգարյանը ի հիշատակ իր ամուսնու՝ հանգուցյալ Հայկ Արգարյանի:

Վերահիշյալ փաստական ավայլները Մեզ վերա բարոյական պարտք են դնում օրհնելու հայրության սիրելի դարձած հեղինակ պատմական և պատվական ժողովուրդը: Օրհնելու լինի մշտապես Տիրոջ հովանիի տրեղող մեր պատվական հեղինակ ժողովուրդը, մաղթենք կենսատու Փրկչին, որ իր հովանու ներքո առնե նորան, վառ պահե նորա եկեղեցասեր և ազգասեր ոգին և ազատ պահե ամեն փորձանքներից:

Օրհնելու լինեն վերևում հիշատակված հայրապետական և եպիսկոպոսական Սուրբ Պատարագի զգեստները ընծայարեող հինգ նվիրատուները. մաղթենք մտադասեր Փրկչին, որ իր հովանի Այլ տարածե հիշյալ նվիրատուների վերա, պահպանե նոցա բնածանիք բարօր վիճակի մեջ, պարգևե նոցա տրեշտություն և գործերին հաջողություն:

Օրհնելու լինի Կալկաթայի Սուրբ Նազարեթ հայոց եկեղեցու շերմեռանդ և գործունյա ճագարածությունը. մաղթենք, որ Բարձրյալը պահպանե նոցա կյանքը, զորացնե նոցա ետևոր և անմտ պահե նոցա սերը դեպի Մայր Աթոռն ու Հայրենիքը: Օրհնելու լինի նաև Մեր հայրապետական պատվիրակ՝ գերաշնորհ տեր Վահան արքեպիսկոպոսը. աղոթեցեք Ամենակալին, որ առողջություն և արեշտություն շնորհե նորան, որպեսզի ի վիճակի լինի նաև հետ այսուրիկ այցելելու Մեր վերելի վտարանդի ժողովրդին, մխրթարելու և նորա հոգևոր-կրթական կարիքները հոգալու, ողջամբ վերադառնալու և հանդեպ Սուրբ Էլմիածնի պարզերես հանդիսանալու:

**ԾԱՅՐԱԿՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԿ
ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

94-19 27



Տուտ: կոնցրետ ի 10-ն յունիսի
1882 Փրկչական տաճ
և ի տուժարիս Հայոց ՌԵՍ.
յութերոզ ամի Հայրապետության Մերոյ,
ի վանե Արթոյ էլմիածնի:





Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Ք

**ՓԻԿՁԻ ՀԲԱՇԱՓԱՌ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՒԻ ԱՌԹԻՎ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՍԻՐԱԶՆԱԳՈՒՅՆ ԿԱԲՈՂԻԿԱՍ
ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕՇՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԵՈՐԳ Զ.Ի ԱՆՈՒԽՆՈՎ,
ՍՏԱՅՎ.ԱՆ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԵՐ
ԵՎ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

ԿՈՍՏԱՆԿՆՈՒՊՈԼՍԻՑ

Ընդունեցե՛ք մեր և մեր ժողովրդի հոգևոր զավակաց և պաշտօնական մարմնոց գաղկական շնորհավորանքն ու սրտագին մաղթանքը Վեճիդ փառաշուքության, արեշատության, Մայր Աթոռի անսասնության համար:

ԳԱՐԵԳԻՆ, ՊԱՏՐԻԱՐԿ

ԵՐՈՒՍԱԿՆՄԻՑ

Սուրբ Հակոբի միաբանության և ամբողջ հոգևորականության անունից մատուցանում ենք գաղկական շնորհավորանք, ցանկանում ենք Ձերդ Վեհափառության երջանիկ կյանք, արեշատություն եկեղեցուն, Հայրենիքին և սիրելի ժողովրդին:

ՊԱՏՐԻԱՐԿԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՆ՝

ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՏԵՐՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻՑ

Շնորհավորելով Ձատկի տունը ցանկանում ենք Ձերդ Վեհափառությանը երկար կյանք:

ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ԹԻՒԼԻՍԻՑ

Վաստառելի բեմի բեմական խորհուրդը և հավատացյալները Ձատկի տների առթիվ անկեղծորեն ցանկանում են Ձերդ Սրբությանը երկա՛ր երկա՛ր տարիների կյանք և առողջություն՝ ի բարօրություն հայ հավատացյալ ժողովրդի:

ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԿԱՀԻՐԵՆՑ

Մեր և եզիպտոսի հայերի անունից խնդրում ենք Ձերդ վեհափառությանը՝ ընդունել մեր սրտաբուխ մաղթանքները Ձատկի տանի առթիվ:

ՄԱՄԱՐԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԻՐՈՒՆՅԱՆ

ՓԱՐԻՉԻՑ

Ձատկի տաների առթիվ խնդրում ենք ընդունեցե՛ք մեր շնորհավորությունները, վառ ցանկություններն ու մեծաբանքը:

Եկեղեցական վարչության նախագահ՝
ԿՈՏՅԱՆ

ԼԵՆԻՆԱԿԱՆԻՑ

Շնորհավորում ենք Ձերդ Սրբության Քրիստոսի Հարության մեծ տոնի առթիվ և մաղթում ենք արեջատություն, հոգևոր բարձր գործունեության ասպարհում երջանիկ և հաջող կյանք՝ ի բարօրություն հայ ժողովրդի և եկեղեցիների:

Համբուրում ենք Ձեր Սուրբ Աջը:

ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԿ
ԳԱՐԵԳԻՆ ՄԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ

ԱՔԵՆՔԻՑ

Քրիստոսի հրաշափառ Սուրբ Հարության տոնի առթիվ խոնարհաբար կուգան մատուցանելու Ձերդ վեհափառության և Գերագույն Հոգևոր Խորհուրդին՝ գաղութիս հոգևորական դասուն, ազգային իշխանության և համայն ժողովուրդին շնորհավորանքները:

ՀԱՅՐ ՆԵՐՍԵՍ ԽՈՐՀՈՐՑԱՆ

ԲԱՔՎԻՑ

Ձեր սիրեցյալ հոտը, եկեղեցականները և բեմական-եկեղեցական խորհուրդը շնորհավորում են Ձերդ Սրբությանը՝ Սուրբ Փրկչի Հարության օրվա առթիվ:

Աղոթում ենք Ամենակալին՝ շնորհելու Ձերդ Սրբությանը երկար կյանք և առողջություն՝ ի բարօրություն Հայաստանյայց Սուրբ եկեղեցու:

ՎԱՐԳԵՍՍ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ

ԹԱՎՐԻՉԻՑ

Փրկչի հրաշափառ Հարության տոնի առթիվ բեմական ժողովի, բեմական խորհրդի, ֆանանայից դասի և համայն հավատացյալ ժողովրդի հետ միասին, խոնարհությամբ համբուրում ենք Վեհիդ Սուրբ Աջը և աղոթում ենք Աբարչին, օր պարզելի Վեհիդ արեջատություն և երկար կյանք:

Յուսշնորհական տեղապահ՝
ՎԱՐԱՊԵՏ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ

ՔԱՂԿԱԴԻՑ

Ամբողջ թեմի կողմից շնորհավորում ենք Սուրբ Զատիկը, ցանկանում ենք Ձեզ առողջություն, արեւշատություն:

ՏԵՐ-ՀԱԿՈՐՑԱՆ

ԲՈՒԽԱՐԵՍՏԻՑ

Հաճուն ռուսիեանայ քարեպաշտ, հայրենասեր ժողովրդին, որդիական ջերմ սիրով մաղթում ենք Ձերո՞վ փնափառության արեւշատություն, առողջ, երջանիկ հովվապետությամբ, վերածնած ծաղկյալ Մայր Հայրենիքի կենսատու սրեկ տակ: Քերիստոս յարեաւ ի մեռելոց:

ՎԱԶԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ԹԵՂՐԱՆԻՑ

Շնորհավորում ենք Փրկչի Հարության տոնը, համբուրում ենք Ձեր Սուրբ Աչը ցանկանալով արեւշատություն և երջանիկ օրեր:

ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԿ
ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՌՈՍՏՈՎԻՑ

Թեմական-եկեղեցական խորհուրդը և հավատացյալները շնորհավորում են Ձերո՞վ Մերությանը և վաճի միաբանությանը Զատիկի սուրբ տոնի առթիվ: Քերիստոս յարեաւ ի մեռելոց: Ցանկանում ենք Ձեզ մեծ հաջողության՝ ընդհանուրն ցանկալի խաղաղության համար Ձեր ջանքերի հաջողության գործում:

ՍՈՒՐԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ՆՅՈՒ-ՑՈՐՔԻՑ

Հայտնում եմ իմ որդիական երախտագիտությունը արհուրյան պատվին համար՝ շնորհված անարժանիս Ձեր 20 մայիսի 1951 թվի № 429 կոնդակով: Մշտական ջանքս է՞ Մայր Աթոզին և Ձեզ կատարյալ հավատարմությամբ ծառայել Աստուծո, եկեղեցվո և ժողովրդին: Ի սրտե աղոթում եմ Ձեր առողջության և արեւշատության համար: Ընդունեցե՞ք մեր թեմի հոգևորականաց, հոտին և իմ որդիական գատկական շնորհավորանքները և սրտագին մաղթանքները:

ՏԻՐԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՆՅՈՒ-ՑՈՐՔԻՑ

Վ Ե Կ Ա Փ ա ' ռ Տ Ե Ր .

Հրաշափառ Սուրբ Հարության տոներուն առթիվ կիսերեմ, որ բարեհաճիք ընդունելի սրտագին շնորհավորություններս և որդիական բարեմաղթություններս Ձերո՞վ վեհափառության թանկագին արեւշատության համար: Բարձրյալ

Աստված անսասան պահե չայտատանյայց մեր Սուրբ Եկեղեցին և անոր արժանքնաբեր Գտնակալը, ի պարծանս ազգիս հայոց և մեր սիրելի Հայրենիքին:

Մատչելով ի համբույր Սրբազնասուրբ Աշույղ՝ մեամ Վեհափառ Հայրապետիդ խոնարհ որդի՝

ՄԱՄԱՐԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍԻՑ

Ա ս տ վ ա ծ ա ռ յ ա չ Վ ե հ ա փ ա՛ ռ Տ ե Ր.

Տյտոն մերո հրաշափառ Սուրբ Հարության առեը որդիական ակնածանեով կշնորհավորեմ Ձերդ Վեհափառության և կխնդրեմ, որ բարեհաճիք ընդունել տուալիս սրտագին բարեմաղթություններ՝ ազգիս մեծագործ ընդհանրական Հայրապետիդ քանկագին կենաց երկարության, քաջառողջության և փառապանծ գահուն անսասանության համար:

Նույն շերմ բարեմաղթություններ կկրկնե իմ միջոցով (զի գրելու անգարող է) տեր Հովսեփ սրբազան իր Վեհափառ և պաշտելի հոգեծնողին, աղերսելով, որ աղոթեք իրեն համար, էրբ տարիներ տևող ու շարունակվող իր ֆիզիկական շարժարաններուն տակալու կարողություն չէ մնացած վրան. և էրբ ցարդ համբերած ու տարած է անհանդուրժելի այդ անշունհները, այդ կողմ է միայն շնորհիվ իր հավատին ամրության և հոգեկան արիության, որ հիացում կպատճառե զինքը դարմանող բժշկական դասուն և բոլոր այցելուներուն: Շատ փորձեց անձամբ գրելու գոնե քանի մը տող, սակայն չհաջողեցավ անկողնո անշարժության մեջ, և հուզված ու լալագին ինձի հանձնարարեց այդ պարտականության կատարումը: Երկյուղածությամբ կմատչի Ձերդ Վեհափառության Սուրբ Աշույն:

Երկոճին հարագառք Մայր Աթոռ, ինչպես նաև մեր ընտանիքի բոլոր սնծ ու փոքր անդամներ տիվ և գիշեր կաղոթենք Ազգին և Եկեղեցիին փառհին ու պարծանեփին, Վեհափառ Հայրապետիդ արևշատության և Ձեր բոլոր հայրենանվեր ձեռնարկներուն հաջողությամբ պսակումին համար:

Հառուցյալ Փրկիչը շնորհե աշխարհի խաղաղություն, պետությանց հաջողություն, ազգերու եղբայրություն և Հայաստանյայց Եկեղեցվո ամուր միասնականություն, որուն հեղինակն ու գործադիր վերին իշխանավարն է Ձերդ Սուրբ Օծությունը:

Մատչելով ի համբույր Սուրբ Աջո Օծյալ Վեհիդ՝ կամ և կմեամ հավատարիմ ձառա և հարագառ որդի՝

ԳՐԻԳՈՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ

հրեշտակների նետ և զյոզիս արդարոց կատարելոց» (Նբր. ԺԲ 23) և «ժողովուրդ բազում որոց ոչ գոյր թիւ, յամենայն ազգաց և յամենայն լեզուաց և յամենայն ժողովրդոց» (Հայտնք. Ե 9):

«Այսօր է գար արար Տէր, եկայք ցնծասցուք և ուրախ եղիցուք ի սմա» (Սղմ. ճԺԸ 24): Ողջունում եմ Ձեզ, սիրելի՛ Նորայր, սուրբ սիրո համբույրով և ուղարկում եմ իմ ամենաչերմ եղբայրական հարգանքներն ի Քրիստոս Ձեզ, Ձեր հոգևորականության և Ձեր հավատացյալ ժողովրդին:

Ազոթելով որ Աստուծո օրհնությունը անպակաս լինի Ձեր վրայից և Տերը Ձերդ Սրբության պազգևի երկար տարիներ, մեամ Ձեր անկեղծ և սիրող եղբայր ի Տեր՝

ԱՌԱՋՆՈՐԴ ԵՎ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ԶԱՐԱՅՆ ԱՆԳԼԻՈ՝
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՋԵՈՅՅՐԻ

ՌԻԳՎԱՅԻՑ

Խնդրում եմ ընդունել իմ սրտագին ողջույնները Ձերդ Սրբությանը և Ձեր աշխատակիցներին՝ Քրիստոսի Հարության սուրբ տոնի առթիվ: Խաղաղություն, առողջություն և ուրախություն Ձեզ:

Լատվիայի Ավետարանական-Լուստերական
Եկեղեցու արքեպիսկոպոս՝
ԳՈՒՍՏԱՎ ՏՈՒՐՄ

ՄՈՍԿՎԱՅԻՑ

Որդիական սիրով ազդարարում եմ Ձերդ Սրբության ցնծայի Քրիստոս յարեալը:

ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ՆԻԿՈԼԱՅ





Կ Ր Ո Ն Ա Կ Ա Ն

ՎԱՀԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՍՈՍ

ՀԱՐՈՒՅԹԱՆ ՊԱՏԿԱՄԸ

(Քարոզ՝ խոսված Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում)

«Տէ աստ, այլ յարեաւ»:

(1904, ԽԳ 8)



արուժիյան տոներ քրիստոնեական աշխարհի մեծագույն և ամենաժողովրդական տոնն է: Մարդկության փրկութիւյան, ազատութիւյան, բարոյական վերածնութեան և միաժամանակ բնութիւնի զարթոնքի՝ զարնան տոնն է դա գերազանցապէս:

Վեհափառ Հայրապետը, իր ճշատիկա ընդհանուր վերնագիրը կրող հիանալի քարոզաշարքում հետևյալն է գրել Հարուժիյան նշանակութիւն մասին.

«Հարուժիյան տոներ գործածական լեզվում կոչվում է նաև Զատիկի Զատիկի տոներ հին տոն է և նախաքրիստոնեական ծագումն ունի, քնչպես փկայում է հեթանոս ազգերի պատմութիւնը, նրբ անցնում էր մահաշունչ ձմեռն ու փչում զարնան կենդանաբար շունչը՝ հարուժիւն տալով մեռած բնութիւն, երբ կանաչում էին ծառերի չոր ճյուղերը՝ հազարավոր ծիւցեր և ընձուղներ արձակելով, երբ կենդանանում էին դաշտերը՝ կանաչով և երկինքանոց ծաղիկներով՝ մարդկութիւնը ողջունում էր զարնան գալուստը՝ նորան նվիրելով Զատիկի տոնը:

«Զատիկական ձուն ու զառը ծագող կյանքի խորհրդանշաններն են. իսկ զատիկական կրակը կենդանաբար արեւի պատկերումն է, որ իրեն կենսունակ ուժ՝ հոսելով երկրի թմբած երակներով՝ վերակենդանացնում է նորան: Զատիկը, ուրեմն, զարթնող և հարուժիւն առնող բնութիւն տոնն է հին ազգերի համար: Սկս ամենը և՛ ճշմարիտ է, և՛ գեղեցիկ,

բայց այն ըտրորը չէ, ինչ որ կարելի է ասել Զատիկի տոնի մասին:

Քրիստոնեայ աշխարհի համար Զատիկը միայն զարնան տոն չէ, և ոչ էլ բնութիւն տոն, այլ հավատի տոն: Այս այն օրն է, երբ մենք լինք կամենում միայն բնութիւն զարթոնքի մասին լսել, այլ անցյալ մեծ եղելութիւն՝ Քրիստոսի Հարուժիւն մասին: Ահա այն ավետիքը, որը նոր շարժման ու նոր կյանքի սկիզբ դրավ: Այն ժամանակվա ծերացած և գերեզմանի դուռը հասած աշխարհի մեջ հնչեց մարդու սկանչին Քրիստոսի Հարուժիւն ավետիքը, որ յուր զօրավոր ու կենսունակ ուժով վերանորոգեց աշխարհը:

«Շին աշխարհը ծերացել էր ոչ մտքով, սակաւ, այլ բարոյապէս. նա չէր կարողում գիտութեան, գեղարվեստի, այլ բարոյական գաղափարների. աշխարհը բարոյապէս փտած էր և կարողում էր բարոյական վերածնութիւն: Քրիստոսի Հարուժիւն պատմական եղելութիւնը սկիզբն է բարոյական այդ եղելութիւնն:

Հարուժիւն հրաշափառ առավոտն է... Երեք բարեպաշտ գրողներն կանայք Զատիկի միաշաբաթի օրը, զվաղ քաղ ընդ առատաստ զնում էին իրենց սիրելի Փրկչի գերեզմանը: Նրանք հոգեկան ծանր ապրումների մեջ էին. ամբողջ երեք գիշերներ հսկել, աղոթել, լացել ու տրտմել էին: Զատիկվա նախորդ օրերի մեջ կատարված դեպքերը ցնցել և կարեւոր խոցել էին նրանց կանացի սիրտն ու զգացմունքները: Իրենց հետ չէր նա Զատիկի օրը, երբ ամբողջ ժողովուրդը զատիկական ուրախ սեղանների շուրջը հա-

վաքված փառաբանում էր Ե՛հովայի նաղմու-
 վեքով և երգերով, եզրպտական գերութունից
 ազատութիւն հիշատակին նախըված օրը,
 նրանց ուրախ Պատեցը՝ Չատիկը, սուգի, վշտի,
 հուսահատութեան էր փոխված: Իրենց հետ
 չէր նա, որ հուսն ու փառքն էր հոնա ժո-
 ղովորին, այն մոմենտին մահապանդ, երբ
 ողջ Հրեաստանը գերի, շղթայված, հեկեկում
 էր նոր Եզրպտոսի՝ Հուսի սվէննեթի տակ:
 Նրանց տեսել էին և լսել նրա խոսքերն ու լա-
 ջալիքիչ պատգամները նահանջի այդ օրերին,
 տեսել էին նրա փառքի ու հաղթանակի օրե-
 բը, երբ ամբողջ ժողովուրդը զգնետ նորա
 զնաց և մայրաքաղաքը արյուղեցաւ նրա
 հաղթական մուտքի օրը, ժողովորական օլ-
 սաննանների և ուրախութեան բացազանու-
 թլունների տակ. բայց տեսան նաև նրան
 խեղճ, դատապարտված, կալանավոր, իբրև
 մի հանցավոր, հուսնական սվիննեթի տակ,
 շղթայակապ: Եվ երկինքը լռել էր այդ բո-
 լորի դիմաց. հրեշտակների գնդեր չէին ե-
 կել նրան ազատելու խաչի անարգ դատա-
 պարտութունից, փակվել էին երկնքի դռ-
 նեքը, արդարութեան և վրեժխնդրութեան
 որոտն ու կայծակները չէին թափվել նրա լա-
 բազործ թշնամիների գլխին: Թուլացել էին
 նրա հնտեղորների սրտերը, աշակերտները
 նույնիսկ փախել էին. միայն այս քնք քա-
 ռիպաշտ կանայք հետևեցին նրան մինչև գե-
 ղեղման:

Խոր քնի մեջ էր աստվածասպան մայրա-
 քաղաքը, քնել էին խաղաղութեան, արդարու-
 թեան տխուր դահիճներն էլ, երբ այս երեք
 բարեպաշտ կանայք, իրենց ազգային տրա-
 դիցիայով, խնկեր, անուշահոտութուններ
 պատրաստեցին՝ տանելու Քրիստոսի գերեզ-
 մանին:

Արդեն քաղաքի պարիսպներից անցել են,
 հասել հե այն պարտեզը, որտեղ գտնվում է
 նրա գերեզմանը: Բանապարհին առաջին ան-
 գամ բացվում են ցածից կողպ նրանց շրթ-
 ները. «Ո՛վ թաւալեցուցէ մեզ զվճմն
 և դուռնք գերեզմանին...» հարցնում են նրանք
 ինքնաքարաբար: Եկար կանայք են նրանք
 ֆիզիկապես: Նրանց բոցավառ սերը բերել է
 նրանց մինչև գերեզման, բայց նրանց բա-
 զուկները տկար են շարժելու գերեզմանի
 քարն անգամ: Բայց... գերեզմանը թափուր
 են գտնում, միայն մահվան պատանքը կա
 այնտեղ... Յավի, վախի, հուսահատութեան
 առաջին րոպեներում կարծում են, որ գողա-
 ցել են Տիրոջ մարմինը թշնամիները... Բը-
 նութեան, արյան տխուր ասպետները միշտ էլ
 վախեցել են արդարների. նահատակների և

մահից, և՛ գերեզմաններից... Ամենարտոտն
 ու երիտասարդ Մազթաղինն փնարում էր
 նրան պարտիզում, նախկին մեծ մեղավորը
 լինում է առաջին վկան Քրիստոսի Հարու-
 թեան, նա պարտիզում խնդրում է անծանոթ
 պարտիզականից՝ ստույ գեարմինն Տեսուն,
 եթէ դու բարձր գնաց, որի համար ինք շտա-
 պել եկել է: Մազթաղինն փոխանակ Քրիս-
 տոսի մարմինը գտնելու, գտավ նրան ողջ,
 յարուցելու ի մեռելոցը: Քրիստոսի ծանոթ
 ձայնը հնչեց Մազթաղինի ականջում՝ «Մա-
 րիամ...»: Ուրախութունից այլալլված՝ Մազ-
 թաղինի շրթներից մի բառ էֆայն թուով, որի
 մեջ նա դրել էր իր ողջ սերը, հավատը, ուրա-
 խութունն ու կյանքը—«Մարունի», ուղից վա-
 րել, փարվել նրա ոտքերին, համբուրել նրա
 հագուստի քղանցքները, բայց հարուցյալ Տե-
 րը նրան ուղարկեց վկա լինելու իր Հարու-
 թեան, վախեցած և ցրված աշակերտների
 մոտ:

Շշրեական հույսերով ու ակնկալութուննե-
 րով մեծացած աշակերտները,— գրում է վե-
 հափառը,— իրենց Վարդապետի մահվամբ
 հուսախաբված զզացին իրենց և Նորա հետ
 գերեզման իջեցրին իրենց բոլոր հանդուգն
 երաղներն ու մեսիական սին հույսեր՝ Նորա
 միջոցով Իսրայելի երկրային թագավորու-
 թլուն հիմնելու: Սակայն Հիսուսի հարութեան
 ավետիքը կերպարանափոխ արավ նրանք:
 Հիսուս կրկին կանգնած է նրանց առաջ ավի-
 լի վեճ ու մեծ. նրանք լսում են Նորա վսեմ
 յոսքերը, տեսնում են Նորա սիրո գործերը:
 Հիսուսի Հարութեան շնորհիվ հարութուն է
 առնում նրանց մեռած հոգին, դառնում են
 արիասիրտ ու համարձակ, կրակույ լեզու են
 ձեռք բերում, քարոզում են համարձակ, ար-
 համարհում են մահը՝ պատրաստ լինելով
 իրենց դավանած և քարոզած ճշմարտութեան
 համար մարտիրոսական պսակ առնել: Հիսու-
 սի հարութեան ավետիքով վերակենդանացած
 մարդիկը կենդանացրին իրենց ժամանակա-
 կից աշխարհը, բարոյապես մեռած աշխար-
 հին վյանք տվին, բարոյական իղբանիթից
 զուրկ աշխարհին իղբաններ պարգևեցին
 և կյանքը արժեք ստացավ մարդու համար:

Կյանքում անխուսափելի է մահը, ընու-
 թեան օրինաչափութուն է դա: Մահը
 մտնում է ամեն դոնից և դարպասից ե վրդո-
 վում է կյանքի խաղաղութունը, բնտանե-
 կան երջանկութունը: Աշխարհը փոշիի հա-
 տիկ է մահվան առաջ. մահն է եղել աշխարհ-
 ների տերը, ամենազոր ուժը աշխարհում:
 Կուր աչքերով, մահվան գերանդին ձեռքում՝
 նա անխնա հնձում է կյանքի կանաչ դաշտե-
 րում: Նի խնայում ծառ ու ծաղկին. մոր գրկից



Վերջնորհ տեր Վանան արհեստագործու Կոստանյանը բարոզ խոսելիս

խլում է երեխային, որբացնում մանուկներին, Դարեր շարունակ մահն անխնա հարվածել է մարդկության. ծանր մղձավանդի նման ճնշում է նա կյանքի վրա, մարդկային մտքի և զգացմունքների վրա: Քրիստոսն անդամ զերծ շմնաց մահվան պատճառած դառնությունից...

«Ահա նա, — շարունակում է Վեհափառը, —

յուր բարեկամ Ղազարոսի գերեզմանին՝ խռոված ոգով և արտասուքն աչքերին... «Եւ արտասուեաց Յիսուս: Բայց որպիսի՜ խոր զգացմունքներ և մտքեր են արտահայտված այդ երկու բառի մեջ: Արդյոք նորա համար արտասվեց Փրկիչը, ինչպես հրեաները յաջատրում էին, որ յուր սիրած անձի գերեզմանին էր մոտենում. ո՛չ! Ճշմարիտ է, մեր

մոտիկ ծանոթի, սրտակից բարեկամի կո-
րուսար մեզ մահկանացուներիս մեծ վիշտ է
պատճառում և ավելի կենդանի կերպով զգալ
և տալիս մահվան բռնությունը կյանքի վերա-
վակյան երբ արտասովոր է ոչ մեզ նման մի
սոսկ մահկանացու, այլ նույն Ինքը՝ կյանքի
Առաջնորդը՝ նորս արցունքները շատ ավելի
մեծ դիմ պիտի ունենային և ավելի դորեզ
շարժառիթներին բխած ինքնին, քան դեպի
անձնական բարեկամի տածած մասնակի
համակրությունը յուր մեջ ամփոփել կարող
էր:

Ներք բարեկամն այն աղետալի գոհն էր, որ
ծանրանում է Ազոմի բուր որդիների վերա-
դարձուսի գերեզմանը ներկայանում է նորա
աչքին իբրև մի ահագին գերեզման, որ կյա-
նել էր և շարունակում էր կյանել մարդու-
թյան կյանքը, և այն մի քանի կաթիլ արտա-
սուքը, որ փայլեցին նորտ արեգակնափայլ
աչքերում՝ ավելի խոր վիշտ և ավելի մեծ սեր
էին արտահայտում, քան այս ամենակու գե-
րեզմանի շուրջը թափված բուր արտասուք-
ները միասին: Հիսուս արասովում էր մար-
դոց վիշտն ու թուլությունը տեսնելով մահ-
վան առաջ, բայց նորա արցունքը տկարու-
թյան և վհատության արցունք չէր. մահը նո-
րա համար անպարտելի դունավոր չէր, ինչպես
մեզ համար: Նա յուր հետ բերել էր մի շղթա՝
կապելու աշխարհի այդ հզորին: Եվ ահա
երկնավոր Հոր անունով, որի լույս խոսքը գո-
յություն տվեց տիեզերքին, կանչում է գերեզ-
մանից շարժություն մեռյալին: Եվ, Ղազարոս,
և մեռյալը կենդանանում է:

Միայն Քրիստոս հաղթեց մահվան...
Ըմահումսզ զմահ կոխեաց և մարդկությունն
աղատեց մահվան ն՝ սարսափներից, և իշ-
խանությունից. Եվ՛ր է մահ, յաղթութիւն
քո, և ո՛ր է, դո՛խք, խաթոց քո: Դարեւ
շարունակ դիտությունն էլ պայքարել է մահ-
վան շարիքների դեմ, բայց վերջնականա-
պես չի կարողացել հաղթահարել նրան:
Միայն Քրիստոսը հաղթեց մահվան իր
կյանքով, և ցույց տվեց, որ գերեզմանից ան-
դին էլ կյանք կա, անմահություն կա, և Ինքն
է տերը կյանքի և մահվան: Գերեզմանով չի
վերջանում մարդու կյանքն աշխարհում: Եթե
այդպես լիներ՝ չէր արժեք ապրել ժայս
վշտի և արցունքի հովիտում: Գերեզմանը
ու այս երկրավոր կյանքը գրավականն են
հարության: Գերեզմանը քրիստոնյա մար-
դու համար ունայնության մի փոս չէ, այլ
մի նոր կյանքի նախադուռ, մի լուսամուտ՝

բացված անմահության, հավերժության նոր
կյանքի վրա: Քրիստոսն է մահը մահ չէ, ալ
մի նիհեջ. մի երկար քոռ, որից նա դարձ-
նելու է, ժուռանգելու համար անմահություն-
նը: Որքան է մխիթարիչ հարություն գա-
ղափարը տառապող մարդկության համար:
Որքան է սփոփարար այն հավատը մարդ-
կաց համար, որ մի օր նրանք տեսնելու են
մյուս կյանքում իրենց սիրելիներին, Քանի՛-
քանի՛ մայրեր հողին են հանձնել իրենց
սրտի ժողովներին: Քանի՛-քանի՛ ծնողապա-
րազակներ անմխիթար ընկել են իրենց
ծնողների գերեզմանների վրա: Որքան է
ուրախ լսել նրանց համար ավետարանի
պատգամը — «Մի՛ լաք, ինչու կենդանիներ-
դին փնտրում եք մեռելների մեջ: Կյանքում
կա՝ սրանից ավելի սրտապնդիչ մխիթարու-
թյուն բոլոր նրանց համար, որոնք վաղաժամ
հողին են հանձնել իրենց սիրելիներին: Այո՛,
«Մեռնալք յառնեն»:

Այլևս փակ գերեզման չկա, — ասում է
վեհափառը. — Քրիստոսի գերեզմանի հետ
յուրը մեռյալների գերեզմանները բացվում
են: Հարուցյալը կենդանություն է բաշխում
բոլորին:

Եվ ամեն անգամ, երբ եկեղեցու բեմից
հնչում է լուսո և կյանքի մեծ ավետիքը՝
Քրիստոս յարեաւ, Քրիստոսի դատարկ գե-
րեզմանի մոտից դեպի աշխարհի շրթ կողմն
են սլանում Փրկչի առաքյալները և կանգ-
նում յուրաքանչյուր գերեզմանի առաջ՝
ամեն քրիստոնեի դիմ վերև և ձայն տալիս.
«Լերի՛՛ որ ննջեալ և կանգնեա՛ց ի մեռելոց և
լուսատրեսցէ՛ զքեզ Քրիստոս»:

Քրիստոսի Հարությունը հիմնաքարն է
Քրիստոնեական Սկեղծու կյանքի և նրա
աստվածաբանության: Քրիստոսի մահն ու
հարությունը առաքյալների քարոզության
այժան և օմեգան են հանդիսանում: Հեթա-
նոսաց մեծ առաքյալը՝ Պողոս, այսպես սուր
է դնում հարցը. «Եթե՛ Քրիստոս չիցէ՛ յա-
րուցեալ, ընդունայն է քարոզութիւնն մեր,
ընդունայն են և հաստեքն ձեր»:
Քրիստոսի Հարությունը մարդկության փրկության հայ-
տարարությունն է:

Քրիստոսի հարության ամենաչքեմ հա-
վատացողներին է եղել մեր ժողովուրդը, իր
կյանքի կենսափորձով. իզուր չէ, որ նրան
անվանել են քրիստոնեություն մարտիրոսը.
շատ է շարժարվել, խաչվել նա իր համոզ-
մունքների, իր հայրենի սրբությունների հա-
մար, բայց երբե՛ք չի կորցրել իր հավատը
իր հարության, իր փրկության համար: Մեր

շին երկիրը հաճախ են վերածնել մեր ժողովրդի թշնամիները՝ գերեզմանների: Մեր ժողովրդի ոսկորներն են թափվել մեր անսահման դաշտերի և ձորերի վրա, եղեկիեղյան տեսիլքի նման՝ սղաշտն այն լի էր ոսկերոց մարդկանս:

1915 թվի, հայկական մեծ եղեռնի, տարին էլ, Հայրենասեր Հայրապետի սիրտը կարեմքեր խոցվել է իր ժողովրդի դառն և արյունոտ կյանքի վերքերից ու նա խորը վշտով գրում է. «Մի գերեզման է այսօր մեր դժբախտ երկիրը... ննջում է մեր միտքը, ննջում է մեր հոգին, նաև մեր սիրտը, բարոյական կյանքի աղբյուրը, որի սպասավորներն ենք մենք՝ հոբևորականներս: Ո՛ր է մեր պապերի անձնադիր հովվությունը, ո՛ր է նրանց անձնվեր ինքնամոռացության զգացումը, ո՛ր է նրանց գաղափարի ծառայող ոգին, ո՛ր է նրանց հասարակական սեղանի սպասավորությունը: Ո՛ր է վարդանի հերոսական ոգին. ո՛ր է Լուսավորչի լույս որոնող և Սահակի ու Մեսրոպի ստեղծող ոգին, ո՛ր է ներսես Աշտարակեցու հայրենասեր ոգին, ո՛ր է մեր նահատակների հանուն ճշմարտության նահատակվող ոգին:

«Նոքա բոլորը թաղված են անցյալի փլատակների տակ, բայց մեռած չեն...»


«Իմ շերմ փափազն է, իմ լավագույն ցանկությունը, որ Հիսուս մեզ համար էլ հարություն առնե, ինչպես յուր աշակերտների համար: Թող նա հարություն առնե մեր սիրելի և թանկագին ազգի ու Հայրենիքի համար»:

Հայրենասեր Հայրապետի իղձն իրականացել է... Մի երջանիկ օր, մի սուրբ առավոտ, այդ ոսկորների վրա հարություն շունչ փչեց... Մահվան դաշտը վերածվեց կենդանության դաշտի... Ոսկորներն իրար եկան, արյուն ու միս հագան, կենդանացան, որովհետև չեմոստ շոնչն ի նոսա, եղեն կենդանի և կանգնեցան կացին ի վերայ ոտից իրեանց, ժողովուրդը բազում յո՛յժ, յո՛յժս: Դա էլ մեր ժողովրդի Հարությունն էր... Ո՛ր են փնտրում այժմ նրան, մեռելների՝ մեջ, Տեյր-Ջը-Ջորի անապատներում թե նփրատի խորը ալիքներում... «Զէ աստ, այլ յարեալ — լսվում է՝ ամեն կողմից, զյարեալ նա էլ իր Փրկչին պես, և այսօր դեպի անսահմանություն է քայլում նա, իր Փրկչին հետ միասին...»

Փա՛ռհ հրաշափառ յարութեան քո, Տէ՛ր...», ևս առաձիլ:

Փա՛ռհ հրաշափառ յարութեան քո, ժողովուրդ իմ, ժողովուրդ հայոց:





ԴԻՐՆԵԿ ԵՊԻՍԿՈՍ

ԴԱՐՁՅԱԼ ՄԻԵՎՆՈՒՅՆ ՆԱՆԿԵՐԳԸ

(Պիոս պապի վերջին կոնդակի առթիվ)



որին Սրբութիւն Ղոտմի Սըրբազան Պապը, Պիոս ԺԲ., սեպտեմբերի 8-ին «Sempiternus Rex» (Շատփոտենական Քազավոր) անվանյալ կոնդակ մը հրատարակեց Քաղկեդոնի ժողովին 1500-ամյակին առթիվ: Լատին եկեղեցւոյ պետին սուլն հովվական թուղթը քիչ արձագանք գտավ կրօնական և քաղաքական աշխարհի մեջ: Ան կպարունակէ դարձի շարունակ կրկնվող միեւնոյն հոտնկերը, թէ Ղոտմի պապն է Քրիստոսի փոխանորդը այս աշխարհի վրա, թէ Ղոտմի եկեղեցին է ճշմարիտ կաթողիկոս եկեղեցին, և թէ մյուս քրիստոնէյա ազգեր, եկեղեցական համարները պարտին Լատին եկեղեցւոյ հպատակիլ, ըլլալու համար թմի հօտ և մի հովիւ:

Կա ևս մի արձանագրություն գավթի մուտքի հյուսիսային որմնասյան ձախ կողքի անկյունավոր կտրվածքի ճակատին, որը եղել է 20 շարքից ավելի, յուրաքանչյուր շարքում 3—4 տառ, իսկ վերջին շարքն ավելի երկար է և փորագրված է որմնասյան բազալի վրա: Տառերի փոսերը ներկված են կարմրագեղով: Խիստ հողմահարված լինելու պատճառով այդ արձանագրությունը վերծանել հնարավոր չեղավ:

Վերը բերված 12 արձանագրություններից 8-ը անաղարտ պահվել են իրենց տեղերում. դրանք են — Մ Ն գ-թ (3 հատ), ժա. և ժբ., իսկ մնացած 6 հատը թափված են կամ քանդված և քարերը վնասված: Դրանք բոլորն էլ, մյուս վիճագի բեկորների հետ, տեղավորված են հուշարձանի հյուսիսային սրահում:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ որևէ

նվիրատվական արձանագրություն չի գտնվել:

Ի վերջո, անհրաժեշտ ենք համարում այստեղ հիշելու մի հետաքրքիր արձանագրության մասին, որը եղել է Ս տառի նմանությամբ մի մեծ քարի (հավանաբար կրաքարի) վրա: Այդ արձանագրությունը եղել է 10 շարքից: Քարի ձախ և աջ թևերը, ինչպես և միացման տեղի ստորին շարքը հայերեն է, իսկ միացման տեղի վերին երկու շարքում եղել է հունարեն կարճ գրություն: Դատելով գրերի ձևից, դա հուշարձանի հնագույն վիճագիրներից մեկն է. այդ միտքը հաստատում է այն հանգամանքը, որ այդ արձանագրությունը եղել է կրաքարի վրա, որը ներկայումս գոյություն ունեցող հուշարձանում բնավ չի օգտագործված: Դժբախտաբար այդ քարն անհայտացել է, սակայն դրա ոչ այնքան հաջող լուսանկարը պահվում է Ճարտարապետական հնությունների պահպանության կոմիտեի արխիվում:

Կորած վիճագրությունների մասին խոսելիս, անհրաժեշտ ենք համարում հիշել նաև մի շատ կարևոր արձանագրության մասին,

որը 1947 թվին գտնի են Հայկական ՍՍՏ Պետական պատմական թանգարանի էքզուսպեդիցիայի անդամները: Այդ արձանագրության բովանդակությունը, էքսպեդիցիայի մասնակիցներին մեկի ասելով, եղել է շինարարական բնույթի: Չնայած մեր բոլոր ջանքերին, հիշյալ վիճաբորի, ինչպես և հունարեն գրեր ունեցող արձանագրության քերեքը չհայտնաբերվեցին:

ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ԱՌԱՆՁԱՆԱՍՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Այս հուշարձանի հիմնական առանձնահատկությունը, որով տարբերվում է կրոնական տիպի մյուս շենքերից, նրա կառուցվածքի բնույթն է, Առհասարակ, հայկական եկեղեցիները կառուցված են ակնպես, որ ներս մտնող հավատացյալն ըստ հնարավորության կտրվի դրսի աշխարհից, որպեսզի արտաքին աշխարհը նրան այլևս չզբաղեցնի և ուշադրությունը կենտրոնանա միայն կրոնական խոհերի և ծեսերի շուրջ:

Բարձրավանի հուշարձանը բոլորովին այլ մտահղացումով է կառուցված: Այդ փոքրիկ շենքը, որի ներսի առաջագործվող տարածությունը միայն 10 քառ. մետր է, ունի մի պատկառելի մեծություն՝ մուտք արևմուտքից, 4 ելք դեպի երկու կողմի արհեստը, մի միջին մեծության լուսամուտ արևի դի ճակատին և մի փոքր լուսամուտ զվաճար մուտքից վերև, որը բացվում է գավթի մեջ: Բացառությամբ վերջինի, մնացած բոլոր անցքերն էլ տաճարի ներսի տարածությունը և նրա մեջ գտնվողներին կապում են արտաքին աշխարհի հետ: Մասնավորապես ուշագրավ է արևելյան լուսամուտի տեղադրությունը, որովհետև թե՛ ծիսակատարող կրոնավորը և թե՛ աղոթող հասարակությունը շարունակ իրենց աչքի առաջ պիտի ունենալին դրսի գեղեցիկ բնությունը, շնորհիվ լուսամուտի արտասովոր ցածր դիրքի: Նույն բնությունը պիտի երևար նրանց աչքից և ձախից, բաց արհեստի մեջ բացվող երկու զույգ անցքերից և արևմտյան մուտքից, գավթի լայն և բարձր կամարների միջից: Մի խոսքով, դա միտիկ տրամադրություն ստեղծող մի փակ աղոթատուն չէ, այլ մի բաց, կործես քնապաշտական տաճար, մի քարոյշին տաղտվար: Ենեցի տաղավարի բնույթ կրելն ընդգծված է թե՛ գավթի մուտքի և հյուսիսային պատերի, և թե՛ տաճարի ներսի բուսական զարդաքանդակներով, որոնց մասին մանրամասն ասված է հուշարձանի մասերի նկարագրության մեջ:

Նկատի ունենալով տաճարի ներսի սահմանափակ տարածությունը, գալիս ենք այն

եզրակացության, որ այդ շենքը սովորական տիպի եկեղեցի չի եղել մասսայական օգտագործման համար, ոչ էլ մեծ միաբանության համար, այլ կառուցվել է սահմանափակ թվով մարդկանց, ժամանակի հասարակություն վերահիսվել, իշխանական դասի, կամ թագավորական տան կրոնական պահանջները բավարարելու նպատակով: Ընդհանրապես և հոյակապ, բայց փոքր մի շենք, որի վրա իր ժամանակին մեծ ծախսեր են արել և ճաշակով զարդարել: Այդպիսի շենքը կարող էր լինել միայն զբոսայգիների համար: Թե իրոք մեմս նպատակով կրոնական տիպի շենքեր շինվում էին Սյունյաց երկրում, այդ առթիվ մենք ունենք մի շատ արժեքավոր վկայություն՝ Ստեփանոս Օրբելյանի պատմության մեջ: Բերենք այդ հատվածը, Բարձրավանի հուշարձանին ժամանակակից, մի այլ շինություն մասին: Պատմիչը նկարագրելով Վահանի վանքի (Բաղը գավառում) շինարարության պատմությունը, եմ գլխի վերջում գրում է.— «Բայց յետ բազում ժամանակաց յաւուրս Գրիգորի՝ թագաւորի Բաղաց (խոսքը Գրիգոր առաջինի մասին է) ՚ի Շահանդիստոյ թագուհւոյն եւ ի Կայտայէ և ի Սենեցքերիմայ թագաւորէ բազում եւ գեղեցիկ շինուածովս առաւել գեղեցկացուցին զվանսն Վահանու՝ կանգնեալ կամարս մեծեամեծս, եւ ի վերայ՝ եկեղեցիս եւ սրահս բազմասիւնս Բարձրաբերձ, եռվտնի եւ յարտախառն իլլաւնուցն»:

Հիշյալ վկայությունը թույլ է տալիս մեզ մի այլ նկատարություն ևս անել Բարձրավանի տաճարի մասին, այսինքն՝ որ դա ամառային ազատագործման նպատակով շինված մի շենք է եղել, որովհետև մի այդպիսի փոքր շենք, որի պատերի մեջ բացված են 5 դուռ և 2 լուսամուտ, չէր կարող լինելայն կիսամյակային պայմաններում շինված լինել: Կարող էր տարվա ընթացքում օգտագործելու համար: Սթե նկատի ունենանք Սյունյաց պատմիչի վերոհիշյալ վկայությունը, հուշարձանի առանձնահատուկ կազմվածքը և այն հանգամանքը, որ հուշարձանը կառուցված է Սյունյաց կարճատև թագավորության միջին, ծաղկած շրջանում, հասնականի կլիմայի, որ ժամանակի իշխող վերահիսվող կարող էր նման շտապություն անել իր ամառանոցային կյանքի հոգևոր պահանջները բավարարելու համար:

Բարձրավանի հուշարձանի ուշագրավ առանձնահատկությունների շարքում պետք է դասել նաև քարե երեք մետրանոց հեծանների գործածությունը գավթի թևերը տանող անցքերի վրա, մի տեղում, որը կարող էր կամարով ծածկվել: Այս կարգի առանձնա-

հատկությունների շարքում պետք է դնել տաճարի գլխավոր մուտքն իր կազմություններ, քանդակներով և մուտքի շրջանակի վերևի անկյուններում, քարերի միացման տեղի շեղ կտրվածքը: Այդ առանձնահատկությունները հավանաբար հունական կամ հռոմեական ութի աղղեցությունն են կրում:

Մյուս առանձնահատկություններից պետք է հիշել տաճարի ներսում, գավթում և սրահներում պատերին դրված կամ հագցրված, նաև ընկած դրություններ մնացած պատկերաքանդակները և գավթի մուտքի երկու կողմերում տեղավորված որմնասյուների խոյակները, որոնց նմանը որևէ այլ տեղ չի կրկնվում:

շարձան այդ տիպի է: այդքան շատ պատկերաքանդակներ չունի:

Ուշագրավ հանգամանք է նաև զարդաքանդակների առկայությունը եկեղեցու ներսում, դրանց թվում, մասնավորապես, նույն ծառերի քանդակները, որոնք իրենց տեղադրությամբ արտասովոր բնույթ ունեն: Հետաքրքիր է այն հանգամանքը, որ հարևանման մի քանդակ դառնում է նույն շափի և ձևի մի քարի վրա, որը հավանաբար հանված է եղել Գրիգոր Մամիկոնյանի պալատից՝ Թալիշում: Այդ քարը ներկայումս դրված է Թալիշի տաճարի հյուսիս-արևելյան կողմում մի գերեզմանի վրա: Երկու տեղում էլ այդ քանդակները անմիջապես գետնից են բարձ-



Նկ. 5.— ԲղեՆո նորավանճի պատկերաքանդակները

Այստեղ անհրաժեշտ ենք համարում մի երկու խոսք ավելացնել, հատկապես պատկերաքանդակների մասին: Հուշարձանն այժմ ունի 8 զանազան շափերի և տարբեր որակի կատարմամբ պատկերաքանդակներ: Այդքան փոքր մի հուշարձանում պատկերաքանդակների այդ առատությունն ինքնին մի բացառիկ երևույթ է: Սովետական Հայաստանի տերիտորիայում գտնվող որևէ մի այլ հու-

րանում, որով տարբերվում են մյուս հուշարձաններում նույն բովանդակությունն ունեցող քանդակների տեղադրությունից:

ՀՈՒՇԱՐԶԱՆԻ ԱՆՈՒՆԸ ԵՎ ՇԵՆՈՒԹՅԱՆ
ԺԱՐՄԱՆԱԿԸ

Բնականաբար, ինքն իրեն, հարց է առաջանում, թե ի՞նչ է եղել այս՝ իր գեղեցկությամբ և առանձնահատկություններով բա-

ցադիկ՝ հուշարձանի անունը և ե՞րբ է դա կառուցված:

Առաջին աղբյուրը, որից այս հարցերի պատասխանը պետք էր ստանալ, դա հուշարձանի արձանագրություններն են:

«Արձանագրություններ» վերնագրի տակ զետեղված են այն 5 վիճակագրությունների վերծանումները, վերապահությանը արված մեր լրացումներով, որոնք այս կամ այն շահով շոշափում են հուշարձանի շինության ժամանակը, շինարարներին և ժամանակակից պատմական անձանց: Գրանք № 36 ա—ե արձանագրություններն են: Գրանքից վերջինը (№ 6) միակ անաղարտ մնացածը, ըստ իր բովանդակության և թվագրության վերաբերում է հուշարձանի վերանորոգությանը, ուստի և առ այժմ այդ մի կողմ թողնելով, տեսնենք թե ի՞նչ են տալիս մյուս չորս արձանագրությունները մեզ հետաքրքրող հարցերի մասին:

1. № ա. մեծ արձանագրության առաջին շարքի սկզբում և № բ-ի երկրորդ շարքի վերջում, մենք գտնում ենք ՇԺԱ թվագիրը, այսինքն 1062 թվականը: Դա հիմնագրության թվական չէ, այլ շինարարության կատարման, ինչպես պարզաբանում է երկրորդ քարի արձանագրությունը— «Ե՛ միևնույն կատարեցաւ սք եկեղեցիս ի Հալոց» թվ. ՇԺԱ:

Անորոշ է մնում «Ե՛ միևնույն դարձվածքը», որը հավանաբար շինարարության ժամանակին է վերաբերում և որի բովանդակությունը կայարգվի, եթե երբևէ հայտնաբերվի այդ արձանագրության սկզբի մասը:

Ապառելով երկտող արձանագրության մեզ հասկանալի բովանդակությունը, շարունակում ենք քաղվածքներ բերել միայն մեծ արձանագրության բովանդակությունից:

2. Առաջին շարքի կեսից մինչև 5-րդ շարքի վերջը պարզում է, որ եկեղեցու հիմնարկությունը եղել է Գրիգոր արքայի թագավորության և Այլույաց եպիսկոպոս Հովհաննու հայտապետության ժամանակ: Այստեղ պակասում է ուկտի առաջնորդի և հիմնադրի անունը, որը հավանաբար եղել է 3-րդ շարքի վերջում:

3. 6-րդ շարքից տեղեկանում ենք, որ այդ անձը, մահանալով, շենքի կառուցումը թերակատար է մնացել:

4. 7-րդ և 8-րդ շարքերից տեղեկանում ենք, որ հայր Գիորգը (երեկ ուկտի նոր վա-

նահայրը) թագավորի հրամանով վերջացնում է շինությունը և օծում: Այստեղ պակասում է թագավորի անունը:

5. Մասամբ թերի 9—12-րդ շարքերում հայր Գիորգը հավանաբար խնդրում է աղօթել թագավորի արեշատության համար, որը և մեզ հետաքրքրող հարցերը լուսաբանելու համար որևէ կարևորություն չունի:

Ամփոփելով արձանագրության տվյալները, ստացվում է հետևյալը.— Եկեղեցու շինարարությունն սկսվել է Գրիգոր արքայի թագավորության և Այլույաց եպիսկոպոս Հովհաննու հայրապետության օրոք, բայց թերակատար է մնացել, հավանաբար ուկտի առաջնորդի մահվան պատճառով և հետագայում թագավորի հրամանով հայր Գիորգը (հավանաբար վանահայրը կամ ուկտի նոր առաջնորդը) վերջացրել է շինարարությունը և օծել եկեղեցին 1062 թվին:

№ գ. արձանագրությունը պատկանում է շինությունն ավարտող նույն հայր Գիորգին, որը խնդրում է աղօթել իր համար:

№ դ. արձանագրությունն ավելի շուտ մի բեկոր է վերոհիշյալ № ա. և գ. արձանագրությունների ոճով, որի մեջ թագավորի մի ինչ որ հրամանով արվածի մասին է, հավանաբար, հիշատակում և բարեմաղթում է, որ նրա աթոռն անասան մնա:

Անդրադառնալով արձանագրության մեջ հիշվող պատմական անձանց և դրանց համադրությունը համեմատելով Այլույաց աշխարհի պատմագիր Ստեփանոս Օրբելյանի հաղորդած պատմական տվյալների հետ, պետք է եզրակացնել, որ արձանագրության մեջ հիշված Գրիգոր արքան կարող է լինել Այլույաց լորրորդ թագավոր, Ավագ Աշոտյան ցեղից, Մերատ թագավորի եղբայր ու հաջորդ, Գրիգոր առաջին թագավորը: Այս առթիվ Ստեփանոս Օրբելյանն իր պատմության ՄԾ գլխում (Ղուկասյան մատենաշարի հրատարակություն, էջ 318) գրում է. «...Բայց Մերատ առաել էր քաղցր եւ հեզահամբոյր եւ ահարկու յամենայն շրջակայ ազգան, որ եւ կալեալ զթագաւորութիւնն ամս ինչ՝ վախճանի... Եւ առնու զթագաւորութիւննորս եղբայր իւր Գրիգոր, եւ որքա երկոքեան որդիք մեծիւն Աշոտոյ, որ Աւագ Աշոտեանք կոչին»:

(Շարունակելի)



ՈՒԴԻՆԵՐԻ ԴԻՄՈՒՄԸ ՊԵՏՐՈՍ Ի-ԻՆ



ուսկվայի Ֆեոդալա-ճորտատիրական պետական արխիվի Արտաքին գործերի կոլեգիայի Հայկական ֆոնդի 1724 թվի № 4 թղթապանակում գտնվում է ուղիների մի դիմումը հայերեն լեզվով Պետրոս Ի-ի վրա: Այդ դիմումը ցարական արքունիք են ուղարկել Աղբյուրներում ապրող ուղիները հատուկ պատգամավորության միջոցով:

Ուղիներն իրենց դիմումի մեջ նկարագրել են կրոնական այն հայաժանցները, որոնց ենթարկվել են իրենք:— Պարսիկ փշխանավորները, տեղական սյունիի ֆեոդալների հետ. քանդել են նրանց եկեղեցիները և հարկադրել են մահմեդականություն ընդունել, այրել են անգամ Սղիշիի անունը կրող իրենց կենտրոնական տաճարը: Չքանկանալով նամակի մեջ մանրամասնությամբ գրել իրենց ծանր վիճակը, նրանք խնդրել են այդ մասին հարցնել նամակատար պատգամավորությունից:

Ուղիները Պետրոս Ի-ից խնդրել են, որ նա մի հրովարտակ տա իրենց պատգամավորներին բերելու, որ հետագայում այրված Սղիշիի անվան տաճարի տեղ նոր տաճար

կառուցեն: Ուղիները լսել են, որ Պետրոս Ի-ը զորքով գալիս է՝ «Յիմա լսեցինք, որ սալալու ոտն մեր գլուխն կոխելու գալիս է, միք աչքն լույս», և ցանկացնել են նախապես Սղիշիի վանքի վերաշինման թույլտվությունն ունենալ իրենց ձեռքում. «Սուրբ Եղիշի է տաքելոյն համար մին փոքր ուրախութեան գիր շաղավթ անես դոցա ձեռքն (այսինքն՝ պատգամավորների ձեռքով— Ա. Ա.) տեղի ուտառապելոցն՝ իբր եկեղեցոյ տեղն հրամանոց դովաթիցն վանք լինի ժամանակով»:

Վավերագիրը կովկասագիտության համար արժեքավոր է ոչ այն պատճառով, որ այն մեզ որոշ պատկերացում է տալիս շահական Պարսկաստանի և նրա դրածո ավատապետների հարստահարությունների և հայաժանցների վերաբերմամբ— այդ մասին մենք ժամանակակիցների կողմից բաղմամբիվ և հանդամանորեն գրված սկզբնաղբյուրներ ունենք— այլ որ այն գրված է ուղիների՝ երբեմնի մի մեծ ժողովրդի բեկորների կողմից, որոնց մասին մենք շատ կցկտուր տեղեկություններ ունենք վերջին դարերից:

Ստորև հրատարակում ենք այդ վավերագիրը:

Մեծառուխ եւ գերախուչակ, գովելի եւ պատուելի, թախ եւ պարծանք ազգին մերոյ վերոյ գրեալս:

Երես անկեալ և արաստալից ճամբարեւմ գերբանս ոտաց էոց, աղաչանօք և պաղատանօք գեկուցանեմք զամենայն յանցանքն և զորպէսն տեղիս ի հրամանաց էոց՝ թէ այստան տարիս մեր գլուխն ի՛նչ բերին

անօրէնք և անհաւատք: Նախ եկեղեցիք այրեցին և արարին ընդ մեզ բազում չարիք՝ ի ներհակ առ հաւատոց մերոց: Քաճանայ ուրացոցին և ոմն ըսպանեցին, կանայք ընդ որովպի իրեանց գերեմարեցին, որդիք ընդ

մայրս նմին նոցին: Վաճե՛ք և անապատք անմարդարեակ եղեալ կան: Մինչև այսօր և մեք մեղացօղբս կանք ի մէջ շարշարանաց. ո՛չ կենդանի եմք և ո՛չ մեռած:

Մեք աղուվանք եմք և ազգով ուսիք. Եղիշէի առաքելոյն փառագոյնեամբն մեր նախնիքի Աստուած հաւատացելալ են. սոսք առաջոցն նահառակութեան տեղիքն առ մեզ է: Քո հրամանոցն յայտնի է, որ յառաջմէ մեր ազգին իշխանութիւն ոչ կայր, որ առաջնոյն նահառակութեան տեղն փոռաւոր վաճե՛ք շինէին, միայն թէ մեր նախնիքն մին փոքր եկեղեցի շինեալ էին, մեք հովաւ կեանք էինք անցուցանում: Այժմս անօրէնք այրեցին, և մեզ զօրով ուրացուցին: Մածուկ մեր օրէնքն պահում ենք, և թէ մեծ և թէ փոքր յեւեկի թրի զօրով քրօթիւն են անել տալիս:

Յիմա լսեցի՛նք, որ սայալու ռոն մեր զուլան կոխելու գալիս է: Մեր աչքն լոյս, կու խնդրեմք ի Քրիստոսէ, որ մեր կեանքն կարն առնէ և հրամանոց կեանքն երկար առասցէ, որ զմեզ ի կերութենէ ազատես ի փառս Աստուածածնիս, և մեք միշտ մեղաւոր բերանով ի Տեսանէ երկար կեանք խնդրող լինեմք: Այլ ի՞նչ հառեմք բանս, ծառայ եմք... կարում չեմք ամէն բան գրել անի: Պիտի որ վասն Քրիստոսի սէրն և մեր

ամենայն առաջն այդ եկողք, ողորմելի փահանայիւղ և մարդկայիւղ իմանաս:

Մեր խնդիրքն այս է, որ մին քանի պետական մեծիդ ծառայք (որ) կայ(ր) տեղս, այդ մարդոց նետ խորհուրդ արել են, զուլուղ ուղարկել, որ Սուրբ Եղիշէի առաքելոյն համար մին փոքր ուրախութեան զիր շաղափար անես, դոցա ձեռօքն տեղիս տառապելոցն՝ իբր եկեղեցոյ տեղն հրամանոց զուլաքիցն վաճե՛ք լինի ժամանակով: Եւ սոքա յետ անօրինաց ներհակութեան առնող են, մեծիդ բարձր հրամանով: Մեացեալ եմք մէջ յերկիր, ոչ զլիսով խելք կայ, ոչ աչաց լոյս: Կամք հրամանաց է: Տկէտ մտնով քիչ գրեցի՛նք, իմաստունդ շատ իմացիր: Արեւիդ մատապ, մեզ մին հար:

Լեր ողջ ի պարծանս մեր:

ՌՃՀԳ (1724) քուին մարտ ամսի 15-ան զրեցաւ:

Յիմարարար գայս միտիքարական խնդիրքս արարի՛նք հրամանոցէդ և մեծոյ ինչպէս կամ կառնես, հրամանք հրամանոց է: Մինչի գալուղ զօրաց քոց, այդ մարդիկդ յետ լղես, մինչև դոցա կայն մեր աչքն նահապարհիկ կու յինի: Նրկնաւոր Քաջաւորն քեզ և զօրացդ հովանի եղիցի: Եւ մեծոյ ամենայն հաւատացեալ հայոց, մեծին և տնանկին:

(ԴԱՓՔՅ, Փ. Արքայապետի թուղթ 4, թ 1724 թ., յ. 27).





Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ւ Ո Ւ Մ

ՀՆՆՐԻԿ ՍԱՐԿԱՎԱԳ

ՉԱՏՆԱԿԱՆ ՏՈՆԵՐԸ ՄԱՅԻ ԱՐՈՒՈՒՄ



Ետրվարի 25-ից (Թուն Բարեկենդան) սկսվեցին պահքի և ապաշխարության օրերը. փակվեցին Մայր Տաճարի վարագույրները, լռեցին ուրախալուր շարականները: Այդ օրվանից սկսած՝ Մայր Աթոռում կատարվում էր ամեն օր երեք անգամ ժամերգություն, լսվում էին ողբաձայն շարականներ, հարյուրավոր մարդիկ խոստովանում էին ու ապաշխարում:

Մաղկազարդի օրը եկեղեցին լի էր ժողովրդով: Նախապես պատրաստված և օրհներված ուռնեու դալար ճյուղերն ու ոստերը բաժանվեցին բոլորին, որոնցից եկեղեցին կանաչազարդվել և ստացել էր տոնական բնույթ: Այդ կանաչ ճյուղերով փրենց կուրծքերն էին զարդարում երիտասարդները, նույնիսկ մանուկներն ու ծերերը: Նույն օրը երեկոյան, Դոնքացեցի ժամանակ, բուպեներն ավելի հուզիչ և սրտառու էին: Մերունազարդ Հայրապետը մասնակցում էր Դոնքացեցին և իր ներկայությամբ առանձին շուք էր տալիս նրան: Նա կանգնած էր Իշման Անդախից քիչ ներքև, դեպի արևմուտք, խաչն ու հայրապետական զավազանը ձեռքին, իսկ իր հետ՝ մյուս միտքանները: Մայր Աթոռի ավազ լուսարար տեր Նիկողայոս ավագ քահանան ծոմկի եկած Իշման Սեղանի առջև իր դուրսից ձայնով երգում էր աղիողորմ «Քա ց մեզ, Տէր, բաց մեզ, Տէր, բաց մեզ, Տէր, գողտն ողորմութեան, որ ողբալով կարգամբ առ քեզ մաղթանքը, իսկ ներգուստ, վարագույրի ետևից, գերաշնորհ տեր Սահակ սրբազանը (եպիս-

կոպոսական զգեստավորությամբ) բարձրաձայն պատասխանում՝ «Ձայն Արարչի Աստուծոյ գոչե՛ս ասերով. Եկա՛ք օրհնեալք Հօր իմոյ. ժառանգեցէ՛ք պատրաստեալ զարքայութիւնն ի սկզբանէ աշխարհոյ: Բոլորը սրտատրոփ սպասում էին վարագույրների բացվելուն: Չորս սեղանների վարագույրները միաժամանակ զանդաղորեն բացվեցին և լավեցին «Ջողորմութեան քո զգուսն բաց մեզ...» շարականի հնչյունները: Վերջում Վեհափառն ասաց «Պահպանի՛ր, օրհնեց և խաղաղություն մաղթեց իր հավատացյալ ժողովրդին ու հոգևորականներին ուղեկցութեամբ վերադարձալ Վեհարան:

Մտեցան պահքի վերջին՝ Ավագ Շարաթվա օրերը: Մայր Տաճարի զանգակները հնչում էին շատ խորհրդավոր և տխուր: Նրանց չուրաքանչյուր ղողանջից կարծես մարդու հոգուց կտրվում էր մի լար: Ավագ երկուշաբթին (այդ օրը մատուցվեց պատարագ) և երեքշաբթին «Աւետումն Աստուածածնի» և «Յիշատակ տասն կուսանաց» օրերն էին: Հոծ բազմության ներկայությամբ կատարվեցին ժամերգությունները:

Ավագ հինգշաբթի օրը նորից փակվեցին վարագույրները, փատարվեց «Ընթրեաց կարգը և մատուցվեց պատարագ: Սարկավազը կարդաց Մարկոսի ավետարանի 26-րդ պոպը, որից հետո վարագույրները բացվեցին և վերաբերողն «ասաց «Հաւատամքը: Այնուհետև զերաշնորհ Սահակ սրբազանը հայն ու գավազանը վերցրած՝ բարձրացավ Ավագ Սեղանի վրա և բարձր ձայնով կայրաց քարոզի հորդորական թույլքը, նախ՝ աւսցուցիչ, ապա հորդորակա եղանակով՝

Վուարո՛ւք, որդեա՛կք իմ, և ես զերկիւղ Տեառն ուսուցանեմ ձեզ աննախանձաբար, իբրև սիրելի և հարազատ որդոց...»։ Պատարագից հետո հաղորդվեցին Հոգևոր Ծեմարանի ուսանողները, ապա բոլորը, որոնք երկար ժամանակ պահել էին պաս և ծոմ։

Երեկոյան ժամը 10-ին կատարվեց Ռոտնալվայի կարգը, Բոլոր անհրաժեշտ իրերը դրված էին Ավագ Անդանի վրա։ Միաբանները զգեստավորված բարձրացան այնտեղ և միասին երգեցին ռեզոնս յիս մշտկաւ և սուրբ եղէց, յուս և քան զծին սպիտակ


Սուրբ խաչով և ավետարանով երեք անգամ տառնազրվեցին և օրհնվեցին յուր և ջուրը միասին, Սահակ սրբազանը վերցնելով իր վրայից շուրջառը՝ կապեց դենջակը և սկսեց խոնարհաբար լվանալ, բոտ ավազության, միաբանների ոտքերը։ Այս արարողութիւնները ՚ի ցուլց մարդկան և ձեականության համար շին կատարվում, այլ ունեն իրենց խորը նշանակութիւնը։ Նրանք հիշեցնում են արժանի հիշատակը Փրկչի, որը խորհրդավոր երեկոյան ընթրիքից առաջ լվաց իր հավատարիմների ցեխոտ և փո-



Ժամաբար Վանան արեւելսկոպոզոսը մի խումբ միաբուհների հետ, պատարագից հետո:

եղէց» ողբածայն սաղմոսը։ Սահակ սրբազանը (եպիսկոպոսական զգեստավորութիւմը) կարդաց Փառաւորեմը գրեզ, Տէր մեր և Փրկիչ Յիսուս Քրիստոս աղոթքը, ապա ջուրը լցրեց կոնքի մեջ և ձայնով ասաց. «Ձայն Տեառն փ վերայ ջուրը և Աստուած փառաց որոտաց» սաղմոսը։ Առանձին աղոթք ասվեց յուրի վրա, որի մի մասը պետք է ըսվեր լվացվելիք ոտքերի վրա, իսկ մյուսը՝ բաժանվեր հավատացյալներին։

շոտ ոտքերը, որպես նշանակ սիրո և խոնարհութիւն։ Այս նշանակ է նաև ապաշխարութիւն, ինչպես նա լվաց իր աշակերտների ոտքերը, այնպես էլ կարող է լվանալ մեր մեղքերը, հանցանքներն ու անիքավութիւնները, եթէ մենք կամենանք և ապաշխարենք. «նա՛ որ երբեմն յուր աշակերտների ոտքերը լվաց՝ և որ միայն վարող է մեր մեղքերը լվանալ, սիրով հրապարակ է դալիս այսօր մեր ոտքերը լվանալու, եթէ միայն հոժա-



Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարը Հարուրյան կիրակին

րենքը (Գեորգ եպիսկոպոս, ներկա Գեորգ Զ. Կաթողիկոս, Վարդապետ, էջ 75)։

Քոլորի ոտքերը վանալուց հետո, Սահակ սրբազանը կարգաց շովհաննու ավետարանի հետևյալ հատվածը՝ «Եւ յորժամ լուաց զոտս նոցա, ա՛ն զհանգրծսն իւր և դարձանալ բազմեացաւ, և ասէ ցնոսա. Գիտէ՞ք զինչ արարիդ ձեզ, Դուք կոչէք զիս Վարդապետ և Տէր, և բարտք ասէք, քանզի եմ իսկ իսկ արդ, եթէ ես լուացի զոտս ձեր, Տէրս և Վարդապետս, և դուք պարտք զմիմեանց ոտս լուանալ։ Զի օրինակ մի ետու ձեզ. զի որպէս ես ձեզ արարի, և դուք առնիչիք» (Նով. ԺԳ 12—15)։

Ավագ ուրբաթ, «Օր շարշարանաց և խաչելութեան Տեսնու մերոյ Տիսուսի Քրիստոսի» գիրքին, կատարվեց հակում, Ավագ և իջած սեղանները ծածկված էին սև վարագույրով, որպես սգո նշան, Ավագ Սեղանի վրա կարգով շարված վառվում էին տասներկու միատեսակ մոմեր, իսկ նրանց կենտրոնում՝ մի կերոն։ Ներքեում կարգացվում էին ավետարաններ և ասվում սաղմոսներ։ Յուրաքանչյուր ավետարանից հետո հանգցվում էր միկական մոմ երկու կողմերից։ Կարգացված ավետարանները վերաբերում էին Քրիստոսի մատնութանը, շարժարանաց և իր աշակերտներին, որոնք ամենաժամր և կրօնիկական մոմենտին լքեցին նրան և փախան։ Առաջինը մոտեցավ զբակալին Սահակ սրբազանը և կարգաց շովհաննու ավետարանը աշակերտների ցրվելու և իրենց Տիրոջը մեծակ թողնելու մասին՝ «Ահա եկեսցէ ժամ և եկեալ իսկ է, զի ցրուեսցիք իիւրաքանչիւր տեղիս, և զիս միայն թողուցօք, և չեմ միայն, զի Հայր ընդ իս է (Նով. ԺԶ 32)։ Վերջացնելուց հետո հանգցրին տասներկու մոմերից երկուսը։ Տասներկու մոմերը՝ տասներկու աշակերտներին, իսկ կերոնը՝ Քրիստոսի խորհրդանշանն է։ Այսպես կարգացվեցին վեց ավետարաններ և իրար հետևից հանգցվեցին տասներկու մոմերը, ապա՝ եկեղեցին լուսավորող մյուս բոլոր լույսերը և մնաց լուկ Ավագ Սեղանի կերոնը։ Մուկ խավարը պատեց ամենուրեք։ Հավատացյալների աշքերի առջևից կրեո-ժապավենի նկարների պես փրար հետևից անցնում էին տխուր և դառն պատկերները զԼեթրեաց զիշերտի՝ որտեղից սկիզբ է առնում Հուպայի մատնութունը, Գեթսեմանի պարտեզի՝ որտեղ Քրիստոս մեկուսի, ժռեկի եկած, աղոթքներ էր ար քառում Բարձրալիս և ասում՝ «Տա՛ յր, եթէ կամիս, անցո՛ւ զբաժակա զայս լինէն, բայց ոչ իմ կամք, այլ քոյդ լիցին»

(Ղուկ. ԻԲ 42), երբ նրա դեմքից, արյան կայակի պես, ոլոռն-ոլոռն գետին էին թափվում քրտինքի այրող շիթերը, Կալիսիա ջահանջապետի տան՝ որտեղ հարցու-փորձ էին անում Քրիստոսին, այսպես, ծծե՛նում, ծակում երեսը, փշե պսակ դնում դիմին, տանջում, հայհուցում, Գողգոթա լեռան՝ որտեղ տանջում էին նրան և խաչափայտի վրա բռնում։ Հավատացյալները հազորակից լինելով իրենց Փրկչի անուր շարժարաններին՝ դառն և անմոռն լաց էին լինում իրենց հոգու խորքերում։

Այնուհետև երգվեցին ողբաձայն սաղմոսներ, ապա հրեշտակների փառաբանութունը՝ «Փառք ի բարձունս», և լույսերը նորից վառվեցին։ Ինելով զբակալի վրա սուրբ խաչն ու ավետարանը, հողերականները շուրջանակի կանգնեցին նրա շուրջը և երգեցին «Քալի քո Քրիստոս, երկրպագանեմք, և զսուրբ մատնութիւնդ քո մեծացուցանեմք, և զսուրբ շարժարանդ քո փառաւորեմք» հոյակապ շարականը, որի թովիչ հնչյունները լցնում էին մարդկանց սրբոտքը մեծ բերկրանքով։ Բուրվառով խնկարկում էր Սահակ սրբազանը, ժամը 10-ին կատարվեց թաղման կարգը։

Ավագ շաբաթ երեկոյան Զատիկ Ճրագալույցն էր, որի համար մատուցվեց հանդիսավոր պատարագ, ներկայութեամբ Վեհափառի, Վահան արքեպիսկոպոսի և մյուսների, Պատարագից առաջ, բեմի վրա բարձրացավ Տիրոսն նորոնծա սարկավազը և կարգաց ՚Իսելիի գիրքը՝ «Յամին ութուտաներորդի՝ Նաբուգոնոսորայ արքայի...»։ Վերջացնելուց հետո քաջվեց վարագույրը, և նա բարձր ձայնով կարգաց ճաշու ժամամուտը՝ «Քրիստոս յարեալ ի մեռելոց, մահուամբ զմահ կոխեաց, և յարութեամբ իւրով մեզ զկեանս պարգեեաց, նմ փառք յալիսեանս, ամէնա։ Վերաբերողը նորոնծա Պետիկ սարկավազն էր, Կարգացվեցին և երգվեցին հարության վերաբերող ավետարաններ և շարականներ, Պատարագից հետո եղաւ նախատեսակ։

Ապրիլի 13-ն է, մեծ Զատիկը։ Անցան ապաշխարության տխուր ու մեկամաղձոտ օրերը։ Փրկչի շարժարաններին, խաչելության և թաղման պատկերներին հազորդում է նրա Հարութունը։ Ահա յուզաբեր կանայք գնում են Քաչեցյալի գերեզմանը, — կարողում են այսօրվա ավետարաններում, — և հրեշտակն ավետում է նրանց Հիսուսի Հարության մասին՝ «Մի՛ երկնչիք, զհիսուս խնդրէք զնազովրեցի զխաչելեալսն, յարեալ, չէ աստու։ Որքան՝ ուրախութուն է պատճա-

ոել քրիստոնյաներին այս բարի ավետիսը և ավել նրանց ուժ և կորով:

Մայր Աթոռ Փրկչի Հարության տոնակատարության առթիվ այսօր անսահման ցընծության և չեղարանքի մեջ էլ, Հաղարավոր մարդիկ՝ դեմքներին կենսուրախ ժպիտներ, սրտերում սեր ու ինդություն, դիմում են դեպի եկեղեցի: Երբսու՜մ տեղ չի՞նչելու պատճառով՝ նրանց երեք թառորդից ավելին դըրսում են էլ: Այսօրվա շարականներն ուրախ են, վեհ և հաղթական: Ամենուրեք՝ թե՛ եկեղեցում և թե՛ դրսում՝ մարդիկ միմյանց ողջունում են ուրախ արտահայտությամբ՝ «Մեզ և ձեզ մեծ անտիս, Քրիստոս յարեալ ի մեռելոց»:

Այսօրվա ճոխ պատարագին ներկա եղավ ծերունի Հայրապետը: Պատարագիչն էր դերաշնորհ Սահակ սրբազանը, վերաբերողը՝ տեր Խորեն ավագ քահանան: Պատարագից հետո հոգևորականների և շափիրների ուղեկցությամբ Վեհափառը վերադառնում է Վեհարան: Ժողովուրդը պատենչի պես կանգնել է նրա առաջ: Հերթով համբուրում են նրա Աչք, դավազանը, և՛ մանուկներ,

և՛ երիտասարդներ, և՛ ծերեր: Այս նշանակ է այն բանի, թե եկեղեցասեր և ժողովրդասեր Հայրապետը որպիսի՝ սեր և համակրություն է վայելում իր սիրելի ճոխ կողմից: Վեհարանի առջև նա կանգ է առնում, օրհնում մի րոպեով իր առջև ծովացած ժողովրդին, ասում «Պահպանիչը, ապա հայացքը հատում դեպի վեր, խնդրում Բարձրալից օրհնություն և խաղաղություն՝ «Տե՛ր, օրհնի՛ր իմ ժողովրդին և պահի՛ր ի խաղաղությամբ»:

Սիրելի՛ հավատացյալք փ Քրիստոս, մեծ սիրով շնորհավորում եմ ձեզ Փրկչի Հարությունը և ցանկանում առաջել ջերմեռանդությու՜ն ձեզ թանկագին հավատքի մեջ: Այսուհետև է՛լ ավելի բորբոքվի ձեր սրտերում Հիսուսի կենսատու սերը և դառնա կենաց աղբյուր: Փրկչի պատվերաներով և ձեր անսասան հավատքի կուռ վահանով դիմված՝ փառապանծ հաղթություն նվաճեք սատանայական և աշխարհային պատրանքների նկատմամբ, պատրաստեք ձեզ երկնից արքայությունը մտնելու և վայելելու հավտենական փառքը:





ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Մ. ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԾԱԾԿԱԾ ՇՈՒԿԱՅԻ ԲԱՑՈՒՄԸ



Կարիքի շժ-ի առավոտյան ժամը 8-ին կատարվեց Երևանի կենտրոնական ծածկած շուկայի բացումը:

Հայաստանի աշխատավորների հանդեպ Սովետական կառավարության անդուլ հոգատարության մի վառ արտահայտությունն է այդ հոյակապ շենքը, որը կուտտեսային գույղերի հազարատեսակ բարիքներով պիտի լցվի ու պիտի պարպվի ամեն օր, սնունդ և բարօրություն ապահովելով մարքադաջի բնակիչներին:

Ահա թե ինչու ապրիլյան այդ վաղ առավոտյան, բացման ժամկետից շատ առաջ, տնտեսական օրերի հատուկ կենտրոնախնդրեա էր տիրում նորակառույցի առջև:

Հավաքված բազմահազար մարդկանց հիացախառն ուշադրության առարկան էր բրոնզագոծ լուզունաձուլ դարբասը, որն արտադրությունն է ճՏՆՊական արդյունաբերության մեծ գործարանի: Գարբասի վրա երևում են նրբարվեստ լուզունաձուլ ծաղկաթաղարներ, ձկներ, ցուպի գլուխներ, որսի կենդանիներ և այլ պատկերներ, որոնք արտահայտում են շուկայի ներքին բովանդակությունը:

Բնու պաշտոնական հայտարարության, հրը ժամը 8-ին բացվեցին բրոնզապատ դռները, բազմահազար մարդկանց հետ

միասին ես էլ բարձրացա մուտքի աստիճաններից և մտա շուկայի վաճառասրահը:

Հայկական ստեղծագործ մտքի հանճարեղ հղացման ինչ հոյակապ ծնունդ է սա, որը դրսից երևում է իբր մի շենք, բայց ներսից ամբողջությունն է բազմաթիվ կառույցների, որոնք ունեն միեռնույն կամարակապ տանիքն ու միեռնույն մոզայիկ սալահատակը:

Հարյուր մետր երկարության վրա, դեմառդեմ 18 շարք բարձրադիր ու լայնարագուկ կամարներ, ծիրանի գոտիներն են այս շուկայի, որի խորքում զետեղված բարձրախոսներից արձագանքվող ցնժուն երգերը մշտազվարթ են պահում Երևանի ծածկված շուկայի մթնոլորտը:

Երևանի կենտրոնական ծածկած շուկայի ամենահետաքրքիր մասը՝ լայնարձակ ներքնասրահն է, գլխավոր վաճառասրահը, որի յուրաքանչյուր կողմի վրա, կամարաշարի խորությունը, ապակյա ցուցանակներ ցույց կտան զնորդներին իրենց ցանկացած բաժինները՝ հացարկվեղենի, հրուշակեղենի, հանքային ջրերի, ոգիյից խմիչքների, ծխախոտի, օժանելիքների, ձկնեղենի, մսի ու բանջարեղենի պահածոների և այլ սնունդամթերքների մասնահատուկ խանութները: Կան նաև գրախանութներ, որոնք սովետական բաղաբացու համար հացի լափ և թերևս հացից էլ ավելի կենսունակություն ներկայաց-

նող գրականությունն են մատակարարում ընթերցասեր հասարակությանը:

Գլխավոր վաճառասրահի կենտրոնական մասում նրանքի սառնորակ ջուրն է ցայտում կտրակաձև շրավազանի մեջ, որի շուրջը պար է բռնում տնային տնտեսուհի մայրերի հետ շուկա եկած աշխույժ մանուկների խումբը:

Ջրավազանի երկու կողմերին, սրահի երկարությամբ ամրացված սոլիսակ վաճառահղանների վրա կոտնտեսուհիների ճաշակավոր ձեռքերովը շաք-շաք դրված կանաչեղենները, եղբայրական վրաստանի ու Ազրբեջանի կոտնտեսականների բերած

այլև՝ Նշիլի է նաև, որ շուկայի բոլոր բաժանմունքները՝ խանութները, պահեստներն ու շաքորատորիաները ունեն հեռակոսային ներքին կապ:

Շենքի ճարտարապետական գեղեցկության չափ, գյուղատնտեսական և պարենային լիառատ ապրանքների գեղեցկության չափ, ներքին ամեն տեսակ սարքավորումների գեղեցկության չափ, վաճառասրահ մանող և ելնող դնորդներին ժպտող բուրավետ ծաղիկների գեղեցկության չափ գեղեցիկ է նաև սպիտակափառ մաքրությունը, որն առանձնապես ակնբախ կարգ ու կանոնի հետ՝ տիրապետում է նրանքի կենտրո-



Երևանի կենտրոնական ծածկած շուկայի եակատը

մանդարինը, կիտրոնը, նուռը, կաղինը, նուշը, ընկուզը, կարմիր խնձորը, սերկևիլը, անուշահամ սուզուփն ու նուկնիսկ կծու փոշի պղպեղը, որպես մազնիս իրենց են քաշում հազարավոր գնորդներին:

Եվ որպեսզի գնորդների սպասարկումը լինի անթերիորեն կազմակերպված, կենտրոնական ծածկած շուկայում ստեղծված են պոստի, ժողովուրդայնատի, խնայողամարկղի բաժանմունքներ, երկաթուղային տոմսերի վաճառքի կետ, տաքսոֆոն ապարատներ և

նական ծածկած շուկայի շարժուն թի անշարժ բովանդակության վրա: Սպիտակ շապիկ են հագել բոլոր վաճառորդները: Սպիտակ են և գերազանցապես մաքուր վաճառասեղանները, անգամ մետաղյա կշիռները: Մաքրություն է մաղվում սպիտակ կամարներից, սյուններից, պատերից: Առողջության նախապայման մաքրությունն է արտահոսում վաճառքի դրված գյուղատնտեսական մթերքներից, կաթնամթերքներից և պարենային ապրանքներից:

Նս եղել եմ արտասահմանում, ուստի և իմ միտքն արագորեն կատարում է մի շարք համեմատություններ երևանի կենտրոնական ծածկած շուկայի և արտասահմանյան նման հիմնարկների միջև:

Բեյրութում, Օրբան Թեատրո կոչված վայրում կար մի ծածկած շուկա, որի մոտիկից անցած ժամանակ պետք էր անպայման խցել հոտոտելիքը՝ լզգալու համար նեխած մսի և ձուկի, լխկած բանջարեղենների և պտուղների գարշահոտությունը: Բեյրութի ամենից կոպտուրական շուկան՝ այսպես ա-

լէին անում ժողովրդի առողջությունն ու բարեկեցությունն ապահովելու համար:

Հալեբի Ռաբ-էլ-Նարալ, Բաբ-էլ-Ջենեյ, Բաբ-էլ-Նասր և Զդեյդե կոչված շուկաներում, գծտևատարած, փոշեթաթախ փոշում էին բանջարեղենը, կաթնեղենները, պտուղները, ընդեղենները և այդ բոլորի վրա տիրապետում էին փողոցներից բարձրացող փոշին և աղբյուրաներում սնված միլիոնավոր ճանճերը: Պատկերը համարյա նույնն էր Դամասկոսի ամենաբանակ պտղա-բանջարավաճառանոցում՝ նշանավոր Մեբրի



Երևանի կենտրոնական ծածկած շուկայի գլխավոր վաճառատանը

սած Օֆրանսիական շուկան էր, որի տախտակաշեն խանութների տանիքները խանութպանի գլխից շատ բարձր էին, իսկ անձրեվոտ օրերին, գնորդների հագուստները խխում էին դառնում խանութների դռնաքիվերից կաթկթվող ջրերի տակ: Աղտեղությունների և հիվանդությունների բույն էր Մաարբատի (Բեյրութ) շուկան և բանջարավաճառանոցը: Եվ Բեյրութի քաղաքապետությունն ու իրաւանի կառավարությունը ոչինչ

հրապարակի մոտ: Եվ վերոհիշյալ քաղաքների քաղաքապետություններն ու Սիրիական կառավարությունը ոչինչ էին անում երկրի բնակիչների կյանքը վարակիչ հիվանդություններից զերծ պահելու համար: Այդ անհոգությունից լարաշար տուժում էր արաբ ժողովուրդը:

Ետ տեսել եմ նաև Թավրիզի շուկան, որը շուկա չէ, այլ մի տեսակ բարեկյան բաղնիք, որտեղ վաճառորդների ազմովը, անկարգությունն ու անմաքրությունը մըր-

ցում էին իրար հետ՝ հակառակ այն իրողության, որ իրանցիք եղել են մի հանդարտաբարո ժողովուրդ:

Երևանի կենտրոնական ծածկած շուկան, որի ճարտարապետական շքեղությունը, մթերքների առատությունը, կարգ ու կանոնի ու մաքրության լրիվությունը երբևէ չի կարող հավասարվել կապիտալիստական որևէ նմանօրինակ հիմնարկ, ցայտուն ապացույցն է Սովետական կառավարության հոգատարության՝ բնակչության կենսամակարդակի բարձրացման և բարեկեցության նկատմամբ:

Սովետական պետության այդ համայնածավալ հոգատարության վառ արտահայտությունն է նաև պարենային ապրանքների պետական մանրածախ գների նոր՝ թվով հինգերորդ իջեցման որոշումը, որը գործադրության դրվեց սույն թվի ապրիլի 1-ից սկսյալ:

Հետպատերազմյան տարիների ընթացքում Սովետական Հայրենիքում սա հինգերորդ անգամն է, որ տեղի է ունենում լայն սպառման առարկաների մանրածախ գների իջեցումը, որը կարող է միայն ազգային եկամտի հարաճուն զարգացմամբ և ավելացմամբ իրականացվել:

Սովետական երկրում աճում է ո՛չ միայն աշխատավորների եկամուտը, այլև ազգային եկամուտը:

Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միությունում ազգային եկամտի գերակշիռ մասը հատկացվում է աշխատավորների նյութական ու կուլտուրական պահանջմունքների բավարարման համար:



Հուլիսից է Երևանի կենտրոնական ծածկած շուկան, ինչպես՝ Հայաստանում կառուցված յուրաքանչյուր հանրային հիմնարկ: Նա շքեղ է որքան ցերեկ ժամանակ, նույնքան և ավելի՝ գիշեր ժամանակ, երբ բազմաթիվ էլեկտրական լամպեր հորդահասան լույս են հեղեղում նրա լայնարձակ ու ամրակերտ կամարների տակ:

Ամառային բացօթյա շուկայովը, որը բացվելու է մուտերս տանիքի վրա, Երևանի կենտրոնական ծածկած շուկան, աշխատավորների միջազգային համերաշխության օրվա՝ Մայիսի 1-ի առթիվ մի քանակազին նվեր է՝ օրեցօր հսկայաքայլ բարգավաճող Հայաստանի քաղաքամայր Երևանի՝ երջանիկ աշխատավոր ժողովրդին:



ՀԱՄԱՌՈՏ ԼՈՒՐԵՐ

ԱՐՎԵՑ ԵՎ ԿՈՂՏՈՒՐԱ

ԵՐԻՏԱՅԱՆԻ ԳՐԱՂՆԵՐԻ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՎԱՆ ԵՌՔ-ԸՐԿԱՅՈՒԹՅՈՒՆ.— Երեք օր տեղյակ սկսեցին և երիտասարդ գրողների սեպուլքիկական շորտերը խորհրդակցությունը, որին մասնակցում էին ավելի քան վաթսուներկու տարեկան գրողներ, որոնց ստեղծագործությունները լույս են տեսել պարբերական մամուլում կամ առանձին գրքերով:

Երիտասարդ դրամատուրգների ստեղծագործությունների մասին զեկուցեց ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Ռ. Ջարտեմ:

Երիտասարդ բանաստեղծների ստեղծագործությունների մասին զեկուցումով շահեցան եկամյալ գրական թերթի խմբագիր Վ. Մեռապետյանը, իսկ երիտասարդ արձակագիրների մասին զեկուցեց ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Լ. Մկրտչյանը:

ՃԱՐՏԱՅԱՆԻ ՏՈՒՆԸ ԵՐԵՎԱՆԻՄ.— Երեսուներեք օր տեղյակ ճարտարապետների տան քաջուճը, որ մեծ իրադարձություն է սեպուլքիկայի կուլտուրական կյանքում, ճարտարապետների տան նոր երկհարկանի շինքը լուսավոր է ու ընդարձակ՝ օժտված բոլոր հարմարություններով:

Երկրորդ հարկում տեղավորված է գաշխնը, որ ունի 180 տեղ, այնուհետև դալիս է ցուցահանդեսային սենյակների շարքը: Առաջին հարկում տեղավորված են ընթերցասրահը, գրադարանը, եկամտական և ջրանկարչական ստուդիաները, Ենթեցի ներքին ձևավորումը կատարված է զեկուլքիկական մեծ ճաշակով:

ԳԻՐԹ ԳՆՔՆԻԿ ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ՄՃԱՍԻՆ.— Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության

ինստիտուտը 1948 թվին սկսեց Երեսուցի գեպի արևելք՝ Գեղամա բնակչության ստորոտում գտնվող Գառնիի հին ամրոցի և բնակավայրի հնագիտական պեղումները:

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակչությունը վերջերս լույս է ընծայել պատմական գիտությունների թեկնածու, հնագետ Ք. Առաքելյանի «Գառնիի հնագիտական պեղումների մասին (1948—1950 թ. թ.)» գիրքը: Նախաբանում սրված է Գառնիի ամրոցի և բնակավայրի նկարագրությունը մեկը և պեղումները, արժույթն և բերված են արձագանքի նյութերը: Հայաստանի էյուրոպական կուլտուրայի այլ հուշարձանների մասին:

ՀՈՐԱՅԱՆԻ ԵՐԵՎԱՆ.— Ապրիլի 16-ին, Հայաստանի Սովետական դրոշմերի միությունում կայացավ երկին՝ նվիրված արձակագիր Հմայակ Սիրապի 50-ամյակին:

Հմայակ Սիրապի կյանքի և գրական գործունեության մասին զեկուցեց ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Ս. Բաբայանը:

Հորիչարին ողջոված ողջունի ընթացում խոսքեր ասացին Հայաստանի Սովետական գրողների միության, Երևանի կալուրի, Հայաստանի երկրակազմողները: Երևանի կալուրի, Հայաստանի երկրակազմողները: Երևանի կալուրի, Հայաստանի երկրակազմողները: Երևանի կալուրի, Հայաստանի երկրակազմողները:

Այնուհետև ընթերցվեցին Հորիչարի հասցեով ստացված թուղթերի հեղուկները, որից հետո շնորհակալական խոսքով Հանդես եկավ Հմայակ սիրապը: Վերջում տեղյակ ունեցավ համերկ:

ՇԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

ՄՍԻ ԵՎ ԿԱՔԻ ԱՐԳՅՈՒՆԱՌԵՐՈՒԹՅԱՆ ՆՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.— Ղափառում սկսվել է մսի կոմբինատի շինարարությունը: Այժմ այստեղ ապրվում են շինարարական Հրապարակի պլանավորման աշխատանքները, գլխավոր է շինքի հիմքը:

Երեսուցի կառուցվելու է սեպուլքիկայում ամենամեծ մսի կոմբինատը, Մոս Ժամանակներս կախվել հիմքի կառուցման աշխատանքները:

Կիրովականում այս ամբողջ կերպով ոչնչացված մանկահանձնի հարթ մսի կոմբինատ: Այստեղ արդեն սկսվում են շինարարական աշխատանքները, այժմ սարվում են շինքի սարքավորման աշխատանքները:

Կենդանական կառուցվում է կաթի կոմբինատ սասնարանով շահագրծ: Այստեղ պետք է պատրաստվեն կարագ, յուղ, պղպեղաղակ և այլ կաթնամթերքներ, Հիմնական արտադրական ջրհեռային շինարարական աշխատանքներն արդեն ավարտված են:

Ելմիածնի շրջանում կառուցվում է խոշոր թռչնարանատարան: Երեւո թռչնատարանի արդեն հանձնված են սպասարանները: Երեւոյում ստեղծվել է Գուլայանի, Քալինի և Կալինի շրջաններում սկսվել է շվեդարական պանի պատրաստող պանարագործարանների շինարարություն:

ՆՈՐ-ԱՅՏԱՅԱՆԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ Է.— 1951—1952 թվերի ընթացքում Նոր-Առաջադեպի քաղաքի գործ-

կմբ մեծ աշխատանք է կատարել թաղացի բարեկարգման ուղղությամբ: Եւրոնակնվում է թաղացի արեւելյան մասի փողոցների ասֆալտացումը: Հիմնադրվում է Նոր շրջան կայան թաղացի այգիները և կանաչ տնկիները շրջով ապահովելու համար: Նոր-Բայազետը կզարգարվի բեկակի և արտադրական գեղեցիկ շենքերով: Ուժեղացվում թափով է գեում անհասանկան բեկակարանային շինարարությունը: 50 անհասանկան կառուցողներ պետությունից ստացել են 500.000 ռուբլի փրկարտան վարել: Նոր-Բայազետի բարեկարգման համար ընթացիկ տարում պետք է ծախվեն կրկնակի շատ միջոցներ, քան անցյալ տարի:

ՓՈՂՈՑՆԵՐԻ ԱՆՐԱՆՎԱԳՈՒՄ.— Երևանում լայն թափ են ստացել փողոցների բարեկարգման աշխատանքները:

ՈՒՍՊՈՒՐԿԱՑԻ ԵՐՁԱՆՆԵՐՈՒՄ

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԱՃԳՆԳՈՐԾՈՒԹՅԱՆԸ.— Փարաջար գյուղում տեղավորված է Հայկական ՍՍՐ Գիտությունների ակադեմիայի Պտղարածուսության ինստիտուտի հիմնական համալսարանային այգին: Այստեղ սկսվել է պտղատու ծառերի տնկումը: Այս այգում անց է կացվում պտղատու ծառերի խնամական փորձարկում՝ աճանակապտուկի տեսակների ընտրության և կոլեկտիվ տեսնություններում նրանց արմատացման համար: Ինստիտուտի տնկարածներում անցված են տասնյակ հազարավոր տնկիներ այս տարվա համար:

Պտղարածուսության ինստիտուտի լեռնային բաժինը լենինականում անցրել է պտղատու ծառերի ետ խալածված տեսակներ՝ ռեսպուբլիկայի լեռնային շրջանները համար: 16 այգայիսի խնձորենու, տանձենու և սալորենու տեսակներ, որոնք այժի են ընկնում իրենց ջրատարման ցանկությունով: Բարձր բերքատվությամբ և մանկությունով, կտակվեն լեռնային շրջանների մի շարք կոլեկտիվ տեսնություններում:

Ինստիտուտի այգիներում ու տնկարաններում համալսված են պտղատու ծառերի տարբեր տեսակներ 2.500 անտեղից ավելի, այդ թվում հազարից ավելի տեղական տեսակներ:

ՆՈՐ ՀՈՂՆԵՐԻ ՈՐՈՂՄԱՆ ՀԱՄԱՐ.— Արտաշատի շրջանի կոլեկտիվ տեսնությունները յուրացրել են խոպան և անբզի հողերը՝ վերածելով դրանց պտղատու և խաղողի այգիներ: Բամբակի դաշտերի: Ակըսվել է Դվինի շրանցի կառուցումը: Նա կոռոզի մոտ 1.000 հեկտար անոց յոզտագործված հողային տարածություն: Արտաշատի շրջանում գյուղատնտեսության կարիքները համար ավելի ու ավելի լայնորեն են սկըսում եզտագործել էլեկտրական էներգիան: Էրկարի-Ֆիկացիայի հիմքի վրա տարվում է Մասիսի, Բաղրամյանի և Արտաշատականի չրհան կայանների շինարարը:

Մասիսի 1-ին կեկտի երթնեկությունը Ատայի: Կողմայի: Կարմիր Բանակի փողոցից միկի Հարթանակի կամուրջը ընկած տեղամասում: Այժմ այստեղ գնում են սալարկման և ասֆալտացուման աշխատանքներ: Հրազդանի աջ ափին, Մանկական երկաթուղու շրջանում աշխատանքներ են տարվում օձակ հանուպարհի ասֆալտացուման ուղղությամբ: Ասֆալտացումով է նաև Բաղրամյան փողոցի շարունակությունը: Կոթյունը ավելի քան 1 կմ, երկարությունը: Զաղացում ավարտվում են ծառերի տնկման գարնանային աշխատանքները: Հնդամենը պետք է տնկվի 300.000 տնկի և 200.000 թուփ: Կանաչապտուան տրեստի ջերմոցներում պատրաստվում են ծաղկեղենի սափիկներ զըտայցիներին և ծաղկանոցների համար:

Դրոփյունը, որոնք Հրազդան գետից շուրջ կողմեն գեպի նոր յուրացված հողերը: Նոր շրհան կայանները կոռոզեն Միշյան, Մասիս, Բուրառուան, Ազատավան, Ներքին Ղամարյու, Բաղրամյան, Գայար, Արտաշատական, Ոստան, Եւրոնակն գյուղերի հողերը՝ ընդամենը 3.000 հեկտար:

ԳԻՏԱԿԱՆՆԵՐՆ ԵՆ ԿՈՒՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ.— Ռեսպուբլիկայի Միկեպտերները Առվալի կից Բամբակագործության գլխավոր վարչության հետ միասին, Հայկական ՍՍՐ Գիտությունների ակադեմիայի Գեներալիկայի ինստիտուտի գլխական աշխատողները Արտաշատի, Զանգեզուարի, Վեղու, Հովտեմբերյանի, Էյրածանի շրջանների 12 կոլեկտիվ տեսնություններում կատարում են լայն արտադրական փորձեր բամբակենու երկարքանի ցանցի ուղղությամբ: Ծանցի այդ նոր մեթոդը թույլ է տալիս մեխանիզացիայի ավելի լայն կիրառում զաշտերի մշակման ժամանակ և բարձրացնում է բամբակի բերքատվությունը: Ապրտակի և Ախուրյանի շրջանի շատ կոլեկտիվ տեսնություններում ինստիտուտի աշխատակիցները Գյուղատնտեսության մինիստրության հետ միասին եզենում են կոլտնտեսականերին շաքարի ճակնդեղի ցանքի նոր մեթոդի յուրացման գործում:

Այդ նոր մեթոդը հնարավորություն է տալիս յուրաքանչյուր հեկտարում 70—80 հազար բույսի փոխարեն անցնել 120—140 հազար:

Ոստանային լուվ հտտիկավոր կուլտուրաների բերքատվության բարձրացման հարցը, ինստիտուտի աշխատակիցները նոր տեսակներ են ստանում, որոնք փորձարկվում են ռեսպուբլիկայի լեռնային շրջաններում:



Ս Փ Յ Ո Ւ Ռ Ք Ո Ւ Մ

«ՄԵՐ ՕՐԵՐԻ ԻՐԱԿԱՆ ՎԱՍԱԿԸ»

(Արտասահմանյան հայ մամուլի տեսություն)



յս խոսքը վերաբերում է Գրիգոր կարդինալ Աղաջանյանին: Բնութագրիր Բեյրութի «Արարատ» թերթինն է:

Արտասահմանյան առաջադիմական, ու հայրենասեր թերթերը լիցուն են Աղաջանյանի դավադրական գործունեության զգայացուցիչ մերկացումներով, որոնք տալիս են ամբողջացված դիմանկարը Վատիկանի և Ուոլ-ստրիտի ծիրանավոր գործակալի:

